

Մարկ Ազդարիդիս

ՀՀ վարչապետի աշխատակազմի Միջազգային իրավական հարցերով ներկայացուցչի գրասենյակի Միջազգային արբիտրաժներում և օտարերկրյա դատարաններում ՀՀ շահերի պաշտպանության վարչության գլխավոր մասնագետ

ԿԱԼԱՆՔԻ ԺԱՄԿԵՏՆԵՐԻ ՈՐՈՇ ՀԻՄՆԱՀԱՐՅԵՐ ԸՍՏ ՀՀ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՆՈՐ ՕՐԵՆՍԳՐՔԻ¹

Համառոտագիր

Հոդվածը նվիրված է 2021 թվականի հունիսի 30-ին ընդունված ՀՀ քրեական դատավարության նոր օրենսգրքով նախատեսված կալանքի ժամկետների վերաբերյալ նոր կարգավորումներին: Մասնավորապես, հոդվածի ուսումնասիրության առարկան են մինչդատական և դատական փուլերում կալանքի առավելագույն հստակ ժամկետներ, կալանքի ընդհանուր տևողության հաշվարկման հիմք որպես մեղադրյալին մեղսագրվող արարքի համար նախատեսված ազատազրկման ձևով պատժի առավելագույն ժամկետը նախատեսող կարգավորումները: Ընտրված թեմայի արդիականության մասին են վկայում, ի թիվս այլնի, ծայրահեղ խափանման միջոց հանդիսացող կալանքի հաճախակի կիրառումը ՀՀ իրավակիրառ պրակտիկայում, ինչպես նաև ՄԻԵԿ 5-րդ հոդվածով սահմանված ազատության և անձնական անձեռնմխելիության իրավունքի խախտման վերաբերյալ Հայաստանի Հանրապետության դեմ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի կողմից կայացված բազմաթիվ վճիռների առկայությունը: Աշխատանքում փորձ է արվել համապարփակ մեկնաբանել վերաբերելի իրավադրույթները՝ առանձին ուշադրություն դարձնելով խնդրահարույց հարցերին: Մասնավորապես առաջ են քաշվել հետևյալ հարցադրումները. ինչպիսի՞ փոփոխությունների են ենթարկվել ՀՀ քրեական դատավարության նոր օրենսգրքի ընդունմամբ կալանքի ժամկետների վերաբերյալ կարգավորումները, անհրաժեշտ և հիմնավորված է արդյոք մինչդատական վարույթում կալանքի առավելագույն հստակ ժամկետների նախատեսումը, արդարացված է արդյոք դատական վարույթում կալանքի տակ պահելու առավելագույն հստակ ժամկետների նախատեսումը և վերջինների փոխկապակցումը մեղադրյալին վերագրվող հանցանքի համար նախատեսված ազատազրկման ձևով պատժի առավելագույն չափին, ինչպիսի՞ կարգավորումներ են նախատեսում կալանքի ժամկետների վերաբերյալ ՀՀ իրավական համակարգին մոտ իրավական համակարգ ունեցող այլ առաջադեմ պետությունները:

Հիմնաբառեր– կալանք, կալանքի ժամկետներ, անձնական ազատության իրավունք, հանրային շահ, մասնավոր շահ:

¹ Հոդվածը ներկայացվել է 16.09.2025թ., գրախոսվել է 06.10.2025թ.:

Ներածություն

2021 թվականի հունիսի 30-ին ընդունված ՀՀ քրեական դատավարության օրենսգիրքը (այսուհետ՝ նաև՝ Նոր օրենսգիրք) զգալիորեն փոփոխեց ներպետական քրեադատավարական օրենսդրությունը՝ ներառելով նոր քրեադատավարական ինստիտուտներ, ինչպես նաև հայեցակարգային փոփոխությունների ենթարկելով գործող ինստիտուտները: Ի թիվս այլնի, էական փոփոխության են ենթարկվել օրենսգրքով նախատեսված առավել խիստ խափանման միջոցի՝ կալանքի² ժամկետային սահմանափակումները կարգավորող իրավադրույթները:

Հոդվածի ուսումնասիրության առարկան վերաբերում է հիշատակված փոփոխությանը, այն է՝ մինչդատական և դատական փուլերում կալանքի առավելագույն հստակ ժամկետների, որպես կալանքի ընդհանուր տևողության հաշվարկի հիմք մեղադրյալին մեղսագրվող արարքի համար նախատեսված ազատազրկման ձևով պատժի առավելագույն ժամկետի նախատեսմանը:

Ընտրված թեմայի արդիականության մասին են վկայում ծայրահեղ խափանման միջոց հանդիսացող կալանքի հաճախակի կիրառումը պրակտիկայում, Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին Եվրոպական կոնվենցիայի 5-րդ հոդվածով երաշխավորված՝ ազատության և անձնական անձեռնմխելիության իրավունքի խախտման վերաբերյալ Հայաստանի Հանրապետության դեմ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի կողմից կայացված բազմաթիվ վճիռների առկայությունը³, նոր իրավակարգավորումների համապարփակ մեկնաբանման անհրաժեշտությունը՝ խնդրո առարկա հարցի վերաբերյալ տեսական մեկնաբանությունների և ձևավորված իրավակիրառ պրակտիկայի բացակայության պայմաններում, ինչպես նաև նոր իրավակարգավորումների մեջ առերևույթ խնդրահարույց տարրերի նախատեսումը:

Հետազոտության շրջանակներում քննարկման առարկա են դարձվելու, մասնավորապես, այն իրավական հարցերը, թե՝

- ինչպիսի՞ փոփոխությունների են ենթարկվել ՀՀ քրեական դատավարության նոր օրենսգրքի ընդունմամբ կալանքի ժամկետների վերաբերյալ կարգավորումները,

- անհրաժեշտ և հիմնավորված է արդյոք մինչդատական վարույթում կալանքի առավելագույն հստակ ժամկետների նախատեսումը,

- արդարացվա՞ծ է արդյոք դատական վարույթում կալանքի տակ պահելու առավելագույն հստակ ժամկետների նախատեսումը և վերջինների փոխկապակցումը մեղադրյալին վերագրվող հանցանքի համար նախատեսված ազատազրկման ձևով պատժի առավելագույն ժամկետին,

² Հաշվի առնելով, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 123-րդ հոդվածի 5-րդ մասի ուժով տնային կալանքի կիրառման կարգի, ժամկետների և բողոքարկման վրա տարածվում են կալանքի համար նույն օրենսգրքով սահմանված դրույթները՝ հոդվածում «կալանք» եզրույթը կիրառելիս վերաբերելի մասերում նկատի ենք ունենալու նաև «տնային կալանքը»:

³ <https://www.civilnet.am/news/970831/> (մուտք/access 14/09/2025)

- ինչպիսի՞ կարգավորումներ են նախատեսում կալանքի ժամկետների վերաբերյալ ՀՀ իրավական համակարգին մոտ իրավական համակարգ ունեցող այլ առաջադեմ պետությունները:

Հոդվածում ընտրված թեման ուսումնասիրելիս կիրառվել են իրավահամեմատական, անալիզի և սինթեզի, ինչպես նաև դեդուկտիվ և ինդուկտիվ մեթոդները:

Հիմնական հետազոտություն

1. Կալանքը որպես խափանման միջոց

Ցանկացած քաղաքակիրթ հասարակություն ինքնապահպանման նպատակով ստիպված է պաշտպանել իրեն հանցագործությունից: Նման խնդիրը լուծելու համար անհրաժեշտ են միջոցներ, որոնք հնարավորություն են տալիս պարզելու, թե արդյոք կատարվել է հանցագործություն և ով է այն կատարել՝ պաշտպանելով նաև անմեղին անարդար դատապարտման վտանգից⁴: Այս խնդիրները լուծելու նպատակով ստեղծվել է քրեական դատավարությունը⁵: Դատավարական ամենահին ինստիտուտներից են հարկադրանքի միջոցները: Դրանք գոյություն են ունեցել նույնիսկ այն ժամանակ, երբ քրեական և քաղաքացիական դատավարությունները դեռևս հստակորեն տարանջատված չէին⁶: Տվյալ ինստիտուտի կարևորությունը պայմանավորված է նրանով, որ հարկադրանքը ցանկացած պետության կարևոր առանձնահատկություններից է, քանի որ այն չի կարող իրականացնել իր գործառույթները, այդ թվում՝ արդարադատության իրականացումը, բացառապես համոզմամբ⁷: Հարկադրանքի միջոցի տեսակ է խափանման միջոցը, որն ըստ ՀՀ քրեական օրենսդրության՝ կարող է կիրառվել միայն մեղադրյալի նկատմամբ նախաքննական մարմնի (հսկող դատախազի համաձայնությամբ կամ առանց) կամ դատարանի որոշմամբ և արտահայտվում է մեղադրյալի որոշակի իրավունքների սահմանափակմամբ, ինչպես նաև որոշ դեպքերում վերջինիս համար լրացուցիչ դատավարական պարտականությունների սահմանմամբ: Խափանման միջոցի կիրառման նպատակը մեղադրյալի

⁴ Барабанов П.К., Уголовный процесс Италии, М.: Изд. «Спутник +», 2019, с. 10.

(Barabanov P.K., Criminal process of Italy, M.: Ed. "Sputnik +", 2019, p. 10).

⁵ Դամբարյան Ա., Ղազարյան Ա., Թադևոսյան Ա., Հայաստանի Հանրապետության քրեական դատավարություն (օրենսդրությունը, սկզբունքները և սուբյեկտները), գիտաուսումնական ձեռնարկ, Երևան, Տիգրան Մեծ, 2024, էջ 30:

(Ghambaryan A., Ghazaryan A., Tadevosyan A., Criminal Procedure of the Republic of Armenia (Legislation, Principles and Subjects), scientific and educational manual, Yerevan, Tigran Mets, 2024, page 30).

⁶ Տե՛ս, օրինակ, Հուստինիանոսի Դիգեստները:

⁷ Трефилов А.А., Меры принуждения в уголовном процессе Германии, Австрии, Швейцарии и Лихтенштейна: историческое развитие // Уголовная юстиция. 2022. № 19. С. 117–125. doi:10.17223/23088451/19/21.

(Trefilov A.A., Coercive measures in criminal proceedings in Germany, Austria, Switzerland and Liechtenstein: historical development // Criminal Justice. 2022. No. 19. P. 117–125. doi:10.17223/23088451/19/21).

հնարավոր ոչ պատշաճ վարքագծի բացառմամբ վարույթի անխոչընդոտ ընթացքն ապահովվելն է: Խափանման միջոցները կարող են կիրառվել և՛ մինչդատական, և՛ դատական փուլերում:

Այսպիսով, խափանման միջոցները կոչված են ծառայելու արդար և արդյունավետ քրեական դատավարության իրականացմանը՝ հանդիսանալով կարևոր տարր դատավարական հավասարակշռության մեջ՝ հանրային շահի և անձի հիմնարար իրավունքների և ազատությունների միջև:

Խափանման միջոցների համակարգում ամենախիստը **կալանքն** է, որով անձի իրավունքներին միջամտությունն ունի առավելագույն ինտենսիվություն: Կալանքը դատարանի որոշմամբ մեղադրյալին օրենքով նախատեսված դեպքերում և կարգով ազատությունից զրկելն է օրենքով և դատարանի այդ որոշմամբ սահմանված ժամկետով⁸, ուստի դրա կիրառման արդյունքում առավելագույն սահմանափակվում է անձի **անձնական ազատությունը** (կարող է միջամտություն տեղի ունենալ նաև մեղադրյալի այլ անձանց հետ հաղորդակցվելու իրավունքին⁹):

Այս առումով անհրաժեշտ է ընդգծել, որ անձնական ազատությունը հիմնական սուբյեկտիվ իրավունք է, որից զրկելու դեպքերը նախատեսված են ՀՀ Սահմանադրությամբ, իսկ կարգը՝ օրենքով: Միաժամանակ, օրենքով են կարգավորվում անձին ազատությունից զրկելու իրավաչափությունը վիճարկելու հետ կապված հարաբերությունները: Անձնական ազատության իրավունքը երաշխավորված է նաև Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի 5-րդ, Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի 3-րդ, Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագրի 9-րդ հոդվածներով, որոնցում նույնպես սպառիչ կերպով սահմանված են անձին ազատությունից զրկելու դեպքերը և կանխորոշված են յուրաքանչյուր կոնկրետ դեպքում անձի ազատության իրավունքի սահմանափակման իրավաչափ նպատակները, ինչը համահունչ է ՀՀ Սահմանադրության 81-րդ հոդվածի պահանջներին¹⁰:

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» Եվրոպական Կոնվենցիայի 5-րդ հոդվածով սահմանված երաշխիքներից բխում է, որ որպես խափանման միջոց կալանք կիրառելիս ազգային դատական մարմինները պարտավոր են հաշվի առնել բոլոր հանգամանքները, որոնք անհրաժեշտ են պարզելու համար, թե կա արդյոք **հասարակական շահ**, համապատասխան ու բավարար պատճառ, որը, հաշվի առնելով անմեղության կանխավարկածը, արդարացնում է նահանջն անձի ազատության իրավունքի հարգանքից, որոնք պետք է հիմնավորված լինեն կոնկրետ փաստացի նյութերով, տվյալներով¹¹: Եվրոպական դատարանն ընդգծել է նաև, որ ներպետական

⁸ 2021 թվականի հունիսի 30-ին ընդունված ՀՀ քրեական դատավարության օրենսգիրք:
(The Criminal Procedure Code of the Republic of Armenia adopted on June 30, 2021):

⁹ *Ibid.*

¹⁰ ՀՀ սահմանադրական դատարանի 2017 թվականի նոյեմբերի 21-ի թիվ ՍԴԴ-1387 որոշում:
(Decision No. SDO-1387 of the Constitutional Court of the Republic of Armenia of November 21, 2017):

¹¹ Letellier v. France, 12369/86

դատարանները պետք է քննության առնեն բոլոր փաստերը, որոնք կողմ կամ դեմ են փաստարկում այնպիսի **հանրային շահի իրական** պահանջի առկայությանը, որը, հաշվի առնելով անձի անմեղության կանխավարկածի սկզբունքը, արդարացնում է անձի ազատությունը հարգելու կանոնից կատարվող շեղումը¹²:

ՀՀ Սահմանադրական դատարանը ևս այս առնչությամբ նշել է, որ ինչպես մարդու և քաղաքացու հիմնական որևէ այլ իրավունքների սահմանափակումը, այնպես էլ անձնական ազատության սահմանափակումը հնարավոր է բացառապես օրենքով և միայն այն դեպքում, երբ այդ սահմանափակումը համապատասխանում է համաչափության սկզբունքին, որը բխում է Սահմանադրության 1-ին հոդվածով ամրագրված իրավական պետության գաղափարից¹³: Համաչափության սկզբունքը պահանջում է, որ մարդու և քաղաքացու հիմնական որևէ իրավունքի սահմանափակումը հետապնդի ՀՀ Սահմանադրությամբ ամրագրված լեգիտիմ նպատակ, պիտանի և անհրաժեշտ լինի այդ նպատակին հասնելու համար (ընտրվի նպատակին հասնելու ունակ այն միջոցը, որը նվազագույնն է միջամտում անձի իրավունքներին) և լինի համարժեք, այսինքն՝ խախտվող իրավունքի և դրա սահմանափակմամբ պաշտպանվող հանրային շահի միջև պահպանվի արդարացի հավասարակշռություն¹⁴: Ուստի, որքան խորն է սահմանափակման ինտենսիվությունը, այնքան մեծ է դրա իրավաչափությունն արդարացնելու բեռը¹⁵: **Համաչափության սկզբունքի էությունը** մարդու և քաղաքացու հիմնական իրավունքների և ազատությունների սահմանափակումների սահմանափակումն է **մասնավոր և հանրային շահերի միջև ողջամիտ հավասարակշռության ապահովման միջոցով**, և հիմնական իրավունքների և ազատությունների սահմանափակումներին ներկայացվող սահմանադրական պահանջների շարքում այն ունի առանձնահատուկ կարևորություն¹⁶:

Այսպիսով, ինչպես յուրաքանչյուր այլ խափանման միջոցի, այնպես էլ կալանքի կիրառման դեպքում գործ ունենք հանրային (արդարադատության անխոչընդոտ իրականացում, վարույթի բնականոն ընթացքի ապահովում) և մասնավոր (մեղադրյալի անձնական ազատության իրավունք) շահերի հավասարակշռման խնդրի հետ, իսկ վերջինս կարող է պահպանված լինել միայն այն դեպքում, երբ միջամտությունն անձի իրավունքներին համապատասխանում է համաչափության սկզբունքին: Այս առումով, պետք է նաև նշել, որ համաչափության սկզբունքն ապահովում է հանրային և մասնավոր շահերի միջև հավասարակշռումը մասնավոր շահի՝ մարդու և քաղաքացու իրավունքների և ազատությունների անհամաչափ միջամտության տեսանկյունից, այսինքն՝ բացառում է հավասարակշռման խախտումը՝ ի վնաս մասնավոր շահի: Այդ իսկ պատճառով, համաչափության

¹² Ibid.

¹³ ՀՀ սահմանադրական դատարանի 2010 թվականի սեպտեմբերի 18-ի թիվ ՍԴՈ-917 որոշում: (Decision No. SDO-917 of the Constitutional Court of the Republic of Armenia of September 18, 2010).

¹⁴ ՀՀ սահմանադրական դատարանի 2020 թվականի հունիսի 18-ի թիվ ՍԴՈ-1546 որոշում: (Decision No. SDO-1546 of the Constitutional Court of the Republic of Armenia of June 18, 2020)

¹⁵ Ibid.

¹⁶ Ibid.

սկզբունքը դիտարկվում է որպես **չափից ավելիի արգելք**¹⁷: Մինչդեռ, հանրային և մասնավոր շահերի հավասարակշռման խախտումը կարող է դրսևորվել նաև ի վնաս հանրային շահի: Վերոգրյալի օրինակ է 2015 թվականի ՀՀ սահմանադրության «Հաղորդակցության ազատությունը և գաղտնիությունը» վերտառությամբ 33-րդ հոդվածում հաղորդակցության գաղտնիության իրավունքի սահմանափակման հնարավորության նախատեսումն առանց դատարանի որոշման, երբ դա անհրաժեշտ է պետական անվտանգության պաշտպանության համար և պայմանավորված է հաղորդակցվողների՝ օրենքով սահմանված առանձնահատուկ կարգավիճակով՝ ի տարբերություն 2005 թվականի ՀՀ սահմանադրության, որը հաղորդակցության գաղտնիության իրավունքի սահմանափակումը թույլատրում էր յուրաքանչյուր դեպքում բացառապես դատարանի որոշման հիման վրա, ինչով իսկ տուժում էր պետական անվտանգության պաշտպանության հանրային շահը: Ուստի, հանրային և մասնավոր շահերի հավասարակշռումն ապահովելիս չի կարելի բացառապես հիմնվել մարդու և քաղաքացու իրավունքների և ազատությունների սահմանափակման համաչափության վրա, այլ պետք է նաև դիտարկել հանրային շահի արդյունավետ ապահովման հնարավորությունը: Ավելին, հաշվի առնելով, որ մարդու և քաղաքացու իրավունքների և ազատությունների սահմանափակումն ինքնանպատակ չէ, հանրային շահի արդյունավետ պաշտպանությունը բխում է նաև այդ նպատակին հասնելու համար սահմանափակված մարդու և քաղաքացու կրած զրկանքների չարժեզրկման գաղափարից: Այլ խոսքով, եթե անձի իրավունքներին և ազատություններին որևէ միջամտություն է տեղի ունենում, այն առնվազն պետք է լինի այն աստիճան, որ հնարավորություն ընձեռի հասնել¹⁸ հանրային շահից բխող այն լեզվի նպատակին, որի համար սահմանափակումը տեղի է ունեցել առաջին հերթին:

Նշված հավասարակշռման պահպանման համար նախատեսվել են մի շարք դատավարական երաշխիքներ (օրինակ՝ նախնական դատական ստուգում), որոնցից այս հոդվածի շրջանակներում մեզ հատկապես հետաքրքրական են **կալանքի կիրառման ժամկետները**: Ըստ Եվրոպական դատարանի՝ ազատությունից զրկման իրավաչափության հարցում որոշիչ է ոչ միայն այն, թե արդյոք առկա է համապատասխան իրավական հիմք, այլև այն, թե կալանքը որքանով է ժամանակային առումով ողջամիտ, կանխատեսելի և հիմնավորված՝ նպատակի համաչափության տեսակետից: Օրենքը պետք է հստակորեն սահմանի, թե երբ, ինչպես և **որքան ժամանակով** կարող է անձը կալանավորվել: Կալանքի տևողությունը չպետք է գերազանցի հետապնդվող նպատակին հասնելու համար անհրաժեշտ ողջամիտ ժամկետը¹⁹:

¹⁷ Գոռ Հովհաննիսյան, Համաչափության սկզբունք, Պետություն և իրավունք, N1 (92) 2022, 47-61, <https://doi.org/10.46991/S&L/2022.92.047>.

(Gor Hovhannisyany, Principle of Proportionality, State and Law, N1 (92) 2022, 47-61, <https://doi.org/10.46991/S&L/2022.92.047>).

¹⁸ Համաչափության սկզբունքի տարր հանդիսացող պիտանիության հատկանիշի ստուգման դեպքում գնահատվում է միայն միջամտության լեզվի նպատակին հասնելուն նպաստելու ունակությունը:

¹⁹ A. and Others v. the United Kingdom, 3455/05; Yoh-Ekale Mwanje v. Belgium, 10486/10.

Կալանքի ժամկետներն ընդհանուր առմամբ կարելի է տարանջատել երկու հիմնական խմբի՝ յուրաքանչյուր անգամ կալանքը կիրառելիս կամ այն երկարաձգելիս այն ժամանակահատվածը, որով կարելի է անձին զրկել ազատությունից, և այն ընդհանուր ժամանակահատվածը, որով անձին կարելի է խափանման միջոցի կիրառմամբ զրկել ազատությունից ամբողջ վարույթի ընթացքում (կալանքի ընդհանուր տևողություն): Ըստ դատավարության փուլի՝ կալանքի ժամկետները կարելի է տարբերակել նաև մինչդատականի և դատականի: Որպես անձի ազատության իրավունքին անհամաչափ միջամտությունը բացառող երաշխիք՝ կալանքի ժամկետները մի կողմից սահմանափակում են մարդու ազատության իրավունքի սահմանափակման չափը, իսկ մյուս կողմից ապահովում են այդ սահմանափակման իրավաչափության ստուգման պարբերականությունը:

ՀՀ քրեադատավարական թե՛ Նոր, թե՛ նախկին օրենսգրքերը մանրամասն կարգավորումներ են նախատեսել կալանքի ժամկետների վերաբերյալ, որոնք, այնուամենայնիվ, էապես տարբերվում են միմյանցից:

2. Հին օրենսգիրք

1998 թվականի հուլիսի 1-ին ընդունված ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի (այսուհետ նաև՝ Հին օրենսգիրք) «Կալանքի տակ պահելու ժամկետը» վերտառությամբ 138-րդ հոդվածը սահմանում էր, որ քրեական գործով մինչդատական վարույթում կալանքի տակ պահելու ժամկետը չի կարող լինել 2 ամսից ավելի, միաժամանակ, ըստ մեջբերված կարգավորման՝ այն դատարանի կողմից կարող էր երկարացվել մինչև 6 ամիս, իսկ բացառիկ դեպքերում, երբ անձը մեղադրվում է ծանր կամ առանձնապես ծանր հանցագործություն կատարելու մեջ՝ մինչև 12 ամիս: Նույն հոդվածով սահմանվում էր նաև, որ քրեական գործով մինչդատական վարույթում մեղադրյալին կալանքի տակ պահելու առավելագույն ժամկետը 1 տարի է կամ մեղադրյալին վերագրվող հանցագործության համար քրեական օրենքով ազատագրկման նախատեսված առավելագույն ժամկետը՝ այն դեպքում, երբ նշված ժամկետը պակաս է 1 տարուց: Դատարանում գործի քննության ընթացքում մեղադրյալին կալանքի տակ պահելու առավելագույն ժամկետ Հին օրենսգրքով չէր սահմանվում, ինչն ուղղակիորեն նշված էր նույն օրենսգրքում²⁰:

3. Նոր օրենսգիրք

Ա) Ընդհանուր դրույթներ

Նոր օրենսգրքում սկզբունքային վերափոխման են ենթարկվել կալանքի ժամկետների վերաբերյալ իրավակարգավորումները: Նախ, հետևելով Եվրոպական Դատարանի ձևավորած իրավական պրակտիկային²¹, սահմանվել է, որ

²⁰ 1998 թվականի հուլիսի 1-ին ընդունված ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 138-րդ հոդվածի 6-րդ մաս:

(Part 6 of Article 138 of the Criminal Procedure Code of the Republic of Armenia, adopted on July 1, 1998).

²¹ McKay v. the United Kingdom, 543/03.

անձի ազատության իրավունքի սահմանափակման (կալանքի) իրավաչափությունն ու անհրաժեշտությունը պետք է ենթարկվի պարբերական վերանայման ոչ միայն մինչդատական, այլև դատական վարույթում²²: Պահպանելով մինչդատական վարույթում կալանքի կիրառման և դրա ժամկետի երկարաձգման յուրաքանչյուր անգամի երկամյա ժամկետը՝ նախատեսվել է, որ դատական վարույթում վերանայման ավելի մեծ պարբերականություն՝ 3 ամիս՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ դատարանը տվյալ դեպքում հանդես է գալիս ոչ թե դատական երաշխիքներ տրամադրողի, այլ վարույթն իրականացնող մարմնի կարգավիճակով, ուստի այս պայմաններում անձի իրավունքների ապահովման երաշխիքների ինտենսիվությունը կարող է ավելի փոքր լինել²³:

Բացի այդ, էական փոփոխությունների են ենթարկվել նաև կալանքի տակ պահելու համար սահմանված առավելագույն ժամկետների վերաբերյալ կարգավորումները: Մինչդատական վարույթի մասով սահմանվել է մեղադրյալի վերագրվող հանցագործության ծանրության աստիճանով պայմանավորված կալանքի տակ պահելու առավելագույն 4 ժամկետ՝ 1) չորս ամիս՝ ոչ մեծ ծանրության հանցագործության համար մեղադրվելու դեպքում, 2) վեց ամիս՝ միջին ծանրության հանցագործության համար մեղադրվելու դեպքում, 3) տասը ամիս՝ ծանր հանցագործության համար մեղադրվելու դեպքում, 4) տասներկու ամիս՝ առանձնապես ծանր հանցագործության համար մեղադրվելու դեպքում: Արդյունքում, կրճատվել են ոչ մեծ և ծանր հանցագործությունների համար մեղադրվելու դեպքում անձին մինչդատական վարույթում կալանքի տակ պահելու ժամկետները՝ յուրաքանչյուրը 2 ամսով: Այս առումով հատկանշական է նաև, որ մինչդատական վարույթում մեղադրյալին կալանքի տակ պահելու առավելագույն ժամկետները համապատասխանում են հանրային քրեական հետապնդման առավելագույն ժամկետների²⁴ և դրանց երկարաձգման առավելագույն ժամկետների²⁵ հանրագումարներին:

Իր հերթին, Նոր օրենսգրքով սահմանվել է, որ կալանքի տակ պահելու ընդհանուր տևողությունը չի կարող գերազանցել մեղադրյալին վերագրվող հանցանքի համար ազատազրկման ձևով նախատեսված պատժի առավելագույն ժամկետը²⁶, որպիսի կարգավորմամբ, փաստացի, նախատեսվել է դատական քննության փուլում մեղադրյալին կալանքի տակ պահելու առավելագույն ժամկետ:

²² Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության նոր օրենսգրքի հայեցակարգային լուծումների, նորարարական մոտեցումների և հիմնական ինստիտուտների մեկնաբանման գործնական ուղեցույց, 2022:

(Practical guide to interpreting conceptual solutions, innovative approaches and key institutions of the new Criminal Procedure Code of the Republic of Armenia, 2022).

²³ *Ibid.*

²⁴ 2021 թվականի հունիսի 30-ին ընդունված ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 192-րդ հոդվածի 1-ին մաս:

(Part 1 of Article 192 of the Criminal Procedure Code of the Republic of Armenia adopted on June 30, 2021).

²⁵ *Ibid.*, 2-րդ մաս, Part 2.

²⁶ *Ibid.*, 119-րդ հոդվածի 5-րդ մաս, Part 5 of Article 119.

Այսպես, **կալանքի տակ պահելու ընդհանուր տևողությունը** վերաբերում է ամբողջ քրեական վարույթին, ինչի մասին վկայում է ոչ միայն կարգավորման բառացի ձևակերպումը, որում չկա որևէ նշում դատական կամ մինչդատական վարույթի մասին, այլ նաև համապատասխան հոդվածի օրենսդրական-կառուցվածքային տրամաբանությունը, որում նախ կարգավորված են կալանքի ժամկետները մինչդատական վարույթում, ապա՝ դատական վարույթում, և միայն դրանից հետո առանձին սահմանվում է նաև կալանքի տակ պահելու «ընդհանուր տևողությունը»: Ուստի, դատական վարույթում մեղադրյալի կալանքի տակ պահելու առավելագույն ժամկետը մեղադրյալին վերագրվող հանցանքի համար ազատագրկման ձևով նախատեսված պատժի առավելագույն ժամկետի և մինչդատական վարույթում նրա կալանքի տակ գտնված ժամկետի տարբերությունն է: Հետևաբար, դատական վարույթում մեղադրյալի կալանքի տակ պահելու առավելագույն ժամկետը նույնպես ուղղակիորեն փոխկապակցված է մեղադրյալին վերագրվող հանցանքի համար ազատագրկման ձևով նախատեսված պատժի առավելագույն ժամկետի հետ:

Բ) Կալանքի տակ պահելու ընդհանուր տևողությունը մեղադրյալին ազատագրկման ձևով պատժի չնախատեսող հանցանք մեղսագրելու դեպքում

Prima facie մարդու իրավունքների պաշտպանության լուրջ երաշխիք նախատեսող և խիստ մարդասիրական նման կարգավորումներն անմասն չեն մնացել խնդրահարույց տարրերից:

Այսպես, ՀՀ քրեական օրենսգրքի վերաբերելի կարգավորումների համաձայն՝ ի տարբերություն միջին ծանրության, ծանր և առանձնապես ծանր հանցանքների՝ ոչ մեծ ծանրության հանցանքների համար կարող է չնախատեսվել ազատագրկման ձևով պատժի²⁷ (օրինակ, ի թիվս այլնի, ՀՀ քրեական օրենսգրքի 173-րդ հոդվածի 1-ին մաս, 180-րդ, 182-րդ հոդվածներ, 185-րդ հոդվածի 1-ին մաս, 194-րդ, 195-րդ հոդվածներ): Մյուս կողմից, ինչպես նշվեց, կալանքի տակ պահելու ընդհանուր տևողության հաշվարկի հիմքը մեղադրյալին վերագրվող հանցանքի համար ազատագրկման ձևով նախատեսված պատժի առավելագույն ժամկետն է: Ստացվում է մի իրավիճակ, որ մի շարք հանցանքների դեպքում անհնարին է կալանքի տակ պահելու ընդհանուր տևողության հաշվարկը, քանի որ համապատասխան հանցանքներն ընդհանրապես չեն նախատեսում ազատագրկման ձևով պատժ: Վերոգրյալն առաջին հերթին վկայում է նրա մասին, որ օրենսդրի կամքն է ազատագրկման ձևով պատժի չնախատեսող հանցանքների դեպքում մեղադրյալի նկատմամբ բացառելը կալանքը որպես խափանման միջոց կիրառելն այն տրամաբանությամբ, որ չպետք է լինի կառուցակարգ մի երևույթի, որն ինքնին չպետք է գոյություն ունենա: Ասվածը, այնուամենայնիվ, հերքվում է Նոր օրենս-

²⁷ 2021 թվականի մայիսի 5-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 17-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանվում է, որ ոչ մեծ ծանրության հանցանքներ են համարվում նույն օրենսգրքով նախատեսված այն արարքները, որոնց համար նույն օրենսգրքի Հատուկ մասով նախատեսված առավելագույն պատժը չի գերազանցում 2 տարի ժամկետով ազատագրկումը, կամ որոնց համար նախատեսված է ազատությունից զրկելու հետ չկապված պատժ, իսկ ազատագրկումը նույն օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի համաձայն ազատությունից զրկելու հետ կապված պատժատեսակներից մեկն է:

գրքի մեկ այլ կարգավորման առկայությամբ, համաձայն որի՝ եթե մեղադրյալին վերագրվող հանցանքի համար ազատությունից զրկելու հետ կապված պատիժ նախատեսված չէ, ապա կալանքը կարող է կիրառվել միայն մեղադրյալի կողմից իր նկատմամբ կիրառված այլընտրանքային խափանման միջոցի պայմանները խախտելու դեպքում²⁸։ Արդյունքում, Նոր օրենսգիրքն, ուղղակիորեն նախատեսելով ազատությունից զրկելու հետ կապված պատիժ չնախատեսող հանցանքում մեղադրվող անձի նկատմամբ կալանքը որպես խափանման միջոց կիրառելու հնարավորությունը, չի սահմանել նման դեպքերում կալանքի տակ պահելու ընդհանուր տևողության հաշվարկման մեխանիզմը, որի հետևանքով, ի համեմատություն առավել ծանր հանցանքների՝ ոչ մեծ ծանրության որոշ հանցանքների դեպքում մեղադրյալի նկատմամբ կալանքը որպես խափանման միջոց դատական վարույթում կարող է տեսականորեն կիրառվել առանց ժամկետային առավելագույն սահմանափակման։ Բնականաբար, նման իրավիճակը հակասում է տեղի ունեցած օրենսդրական փոփոխությունների էությանը և գաղափարին, որը կոչված էր առավելագույնս երաշխավորելու անձի ազատության և անձեռնմխելիության իրավունքի արդյունավետ իրացումը և վերջինիս միջամտության խիստ կանոնակարգումը։

Առաջացած խնդրի հնարավոր լուծման տարբերակ է առկա օրենսդրական բացի լրացումը²⁹ **անալոգիայի** միջոցով։ «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 39-րդ հոդվածը սահմանում է, որ եթե օրենսդրության մեջ բացակայում է կոնկրետ հասարակական հարաբերությունը կարգավորող իրավական նորմը, սակայն օրենսդրությամբ սահմանված է համանման հարաբերությունները կարգավորող այլ իրավական նորմ, ապա այդպիսի հարաբերությունների նկատմամբ (եթե դա չի հակասում դրանց էությանը) կիրառվում են համանման հարաբերություններ կարգավորող իրավական նորմերը (օրենքի անալոգիա), ընդ որում՝ օրենքի անալոգիան կարող է կիրառվել, միայն եթե տվյալ օրենքով չի արգելվում անալոգիայի կիրառումը։ Իր հերթին, օրենքի անալոգիա չի կարող կիրառվել, եթե դրանով սահմանափակվում են անձանց իրավունքները, ազատությունները կամ նրանց համար նախատեսվում է նոր պարտականություն կամ պատասխանատվություն, կամ խստացվում են նրանց նկատմամբ կիրառվող պատասխանատվության, հարկադրանքի միջոցները կամ դրանց կիրառման կարգը³⁰։ ՀՀ քրեական դատավարության օրենսգիրքը չի

²⁸ 2021 թվականի հունիսի 30-ին ընդունված ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 118-րդ հոդվածի 3-րդ մաս։

(Part 3 of Article 118 of the Criminal Procedure Code of the Republic of Armenia adopted on June 30, 2021)

²⁹ Ղամբարյան Ա., Մուրադյան Մ., Պետության և իրավունքի տեսություն, ուսումնական ձեռնարկ, 4-րդ հրատ., Երևան, «Լուսաբաց հրատարակչատուն», 2023, էջ 347։

(Ghambaryan A., Muradyan M., Theory of State and Law, textbook, 4th edition, Yerevan, "Lusabats Publishing House", 2023, page 347).

³⁰ 2018 թվականի մարտի 21-ին ընդունված «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 39-րդ հոդվածի 3-րդ մաս։

(Part 3 of Article 39 of the RA Law "On Normative Legal Acts" adopted on March 21, 2018).

պարունակում անալոգիայի կիրառման արգելքի կամ սահմանափակման վերաբերյալ որևէ դրույթ, ուստի քրեադատավարական նորմերի կիրառումն անալոգիայով իրավաչափ է, եթե խոսքը չի գնում անալոգիայի ընդհանուր արգելքի վերոնշյալ դեպքերի մասին: Տվյալ դեպքում անալոգիայի կիրառումը հանգեցնելու է անձի իրավունքներին միջամտությունը սահմանափակելուն ուղղված հասարակական հարաբերությունները կարգավորելուն, հետևաբար անհրաժեշտ և բացակայող իրավական նորմի առաջացրած բացը լրացնելու համար անալոգիայի կիրառումն իրավաչափ է:

Անալոգիայի կիրառման թույլատրելիությունը հավաստելուց հետո անհրաժեշտ է պարզել, թե առկա է արդյոք դրա կիրառման հնարավորությունը: Այսինքն՝ հաջորդիվ պետք է քննարկվի, թե առկա է արդյոք օրենսդրությամբ սահմանված համանման հարաբերությունները կարգավորող այլ իրավական նորմ, թե ոչ: Բնական է թվում առաջին հերթին կիրառվելիք նորմը փնտրել հենց քրեադատավարական օրենսգրքում, ինչը, սակայն, ապարդյուն է, քանի որ տվյալ դեպքում բացակայում է ոչ այնքան հասարակական հարաբերությունները կարգավորող քրեադատավարական կառուցակարգը, այլ օրենսդրական սխալ կարգավորման արդյունքում քրեադատավարական կառուցակարգն օգտագործել է նյութական իրավունքի ի սկզբանե սխալ կոմպոնենտ (ազատագրկման ձևով պատժի առավելագույն ժամկետն այն հանցանքի դեպքում, որի համար ընդհանրապես նման պատիժ նախատեսված չէ): Նման պայմաններում քրեադատավարական խնդրի լուծումը, ինչպես և ինքնին խնդիրը, պետք է գտնել նյութական իրավունքում: Առաջացած խնդիրը կարելի է նկարագրել հետևյալ կերպ՝ ազատագրկման ձևով պատիժ չնախատեսող ոչ մեծ ծանրության հանցանքների դեպքում ինչը կարող է հիմք ընդունվել որպես կալանքի տակ պահելու ընդհանուր տևողության հաշվարկի հիմք: Հաշվի առնելով, որ կալանքի տակ պահելու ընդհանուր տևողության քրեադատավարական կարգավորումների էությունը ժամկետային սահմանափակման փոխկապակցումն է մեղադրյալին վերագրվող հանցանքի ժամկետային չափանիշ ունեցող առավել խիստ պատժատեսակին (ազատագրկմանը)՝ բարձրացված հարցի լավագույն պատասխանն է թվում ազատագրկման ձևով պատիժ չնախատեսող հանցանքների դեպքում մեղադրյալին կալանքի տակ պահելու ընդհանուր տևողության հաշվարկի հիմք ընդունել նրան վերագրվող հանցանքի սանկցիայով նախատեսված առավել ծանր պատժատեսակի առավելագույն չափը՝ փոխարկված ազատագրկման ժամկետին: Այսպես, ՀՀ քրեական օրենսգրքի 61-րդ հոդվածը սահմանում է, որ **Որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելը** պատժից դատապարտյալի խուսափելու դեպքում պատիժը փոխարինվում է ազատագրկմամբ՝ որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելու 3 օրը հաշվարկելով ազատագրկման 1 օրվա դիմաց: Նման կարգավորում առկա է ինչպես **փուզանքի** դեպքում՝ ազատագրկման 3 օրը հաշվարկվում է նվազագույն աշխատավարձի դիմաց, այնպես էլ **հանրային աշխատանքների** դեպքում՝ հանրային աշխատանք-

ների 8 ժամը հաշվարկվում է ազատազրկման 1 օրվա դիմաց, և նաև **ազատության սահմանափակման** դեպքում՝ ազատության սահմանափակման 2 օրը հաշվարկվում ազատազրկման 1 օրվա դիմաց: Մյուս կողմից, ՀՀ քրեական օրենսգրքի 78-րդ հոդվածը սահմանում է, որ հանցանքների համակցությամբ և դատավճիռների համակցությամբ պատիժները լրիվ կամ մասնակիորեն գումարելիս ազատազրկման 1 օրվան համապատասխանում է **կարճաժամկետ ազատազրկման** 1 օրը: Վերոգրյալ նյութաիրավական կարգավորումներից հետևում է, որ ՀՀ քրեական օրենսգրքով հստակ սահմանված են տարբեր պատժատեսակների **փոխարժեքները**, որի օգտագործմամբ կարելի է ազատազրկման ձևով պատիժ չնախատեսող հանցանքների դեպքում համապատասխանեցնել կոնկրետ հանցանքի առավել խիստ պատժատեսակի առավելագույն չափն ազատազրկմանը, որն արդեն կարող է օգտագործվել մեղադրյալին վերագրվող ազատազրկման ձևով պատիժ չնախատեսող հանցանքի դեպքում կալանքի տակ պահելու առավելագույն չափը որոշելու համար:

Պատկերավոր լինելու համար անհրաժեշտ է դիտարկել վերոգրյալը կոնկրետ օրինակներով: ՀՀ քրեական օրենսգրքի 195-րդ հոդվածի 2-րդ մասը պատասխանատվություն է նախատեսում որակյալ ֆիզիկական ներգործության համար: Տվյալ արարքը պատժվում է տուգանքով՝ տասնապատիկից երեսնապատիկի չափով, կամ հանրային աշխատանքներով՝ հարյուրից երկու հարյուր ժամ տևողությամբ, կամ **ազատության սահմանափակմամբ՝ առավելագույնը երկու տարի ժամկետով**, կամ **կարճաժամկետ ազատազրկմամբ՝ առավելագույնը երկու ամիս ժամկետով**: Որակյալ ֆիզիկական ներգործության համար նախատեսված առավել խիստ պատժատեսակը կարճաժամկետ ազատազրկումն է, իսկ դրա առավելագույն ժամկետը՝ երկու ամիս: Երկու ամիս կարճաժամկետ ազատազրկումը ՀՀ քրեական օրենսգրքի ընդհանուր մասի նորմերի համաձայն՝ համապատասխանում է երկու ամիս ազատազրկմանը: Այնուամենայնիվ, ստացված երկու ամիսը չի կարող դիտարկվել որպես ֆիզիկական ներգործություն կատարելու մեջ մեղադրվող անձին կալանքի տակ պահելու առավելագույն ժամկետ, քանի որ կալանքի ընդհանուր տևողության բաղկացուցիչ մաս կազմող մինչդատական վարույթում կալանքի տակ պահելու ժամկետը ոչ մեծ ծանրության հանցանքների համար 4 ամիս է, իսկ մասը չի կարող գերազանցել ամբողջը: Հետևաբար, կարճաժամկետ ազատազրկման առավելագույն ժամկետը չի կարող կիրառվել մեղադրյալին կալանքի տակ պահելու ընդհանուր տևողությունը հաշվարկելիս: Ուստի, անհրաժեշտ է դիտարկել հաջորդ առավել խիստ պատժատեսակը՝ ազատության սահմանափակումը: Ըստ ՀՀ քրեական օրենսգրքի Ընդհանուր մասի նորմերի՝ երկու տարի ժամկետով ազատության սահմանափակումը համապատասխանում է մեկ տարի ժամկետով ազատազրկմանը: Արդյունքում, որակյալ ֆիզիկական ներգործության դեպքում մեղադրյալի կալանքի տակ պահելու առավելագույն ժամկետը, անալոգիայի կիրառման արդյունքում, կլինի 1 տարին:

Քննարկենք մեկ այլ օրինակ: ՀՀ քրեական օրենսգրքի 185-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ անձին՝ առանց իր ազատ կամարտահայտության և իրազեկված ու պատշաճ ձևակերպված համաձայնության իր կյանքին կամ առողջությանը վնաս պատճառելու սպառնալիք պարունակող բժշկական, գիտական կամ այլ փորձի ենթարկելը պատժվում է տուգանքով՝ առավելագույնը քսանապատիկի չափով, կամ հանրային աշխատանքներով՝ ութսունից հարյուր հիսուն ժամ տևողությամբ, կամ որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ **որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելով՝ առավելագույնը երեք տարի ժամկետով**: Անձին առանց իր համաձայնության բժշկական, գիտական կամ այլ փորձի ենթարկելու համար նախատեսված առավել ծանր պատժատեսակը որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելն է, իսկ դրա առավելագույն նախատեսված չափը՝ 3 տարի: Որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից 3 տարի ժամկետով զրկելը համապատասխանում է 1 տարի ազատազրկմանը, ուստի ՀՀ քրեական օրենսգրքի 185-րդ հոդվածի 1-ին մասով մեղադրվող անձին կալանքի տակ պահելու ընդհանուր տևողությունը չի կարող գերազանցել 1 տարին:

Հարկ է ընդգծել, որ նման փոխարկումը հնարավոր չէ տուգանքի կամ հանրային աշխատանքների դեպքում, քանի որ տվյալ պատժատեսակների անգամ ՀՀ քրեական օրենսգրքով նախատեսված ազատազրկման համապատասխանեցված առավելագույն չափերը (ժամկետները) նվազ են Նոր օրենսգրքով սահմանված մինչդատական վարույթում ոչ մեծ ծանրության հանցանքի համար մեղադրվող անձին կալանքի տակ պահելու առավելագույն ժամկետից: Ստեղծված իրավիճակում ՀՀ քրեական օրենսգրքի 79-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ մասերով նախատեսված պատժին փաստացի անազատության մեջ գտնվելու ժամկետի հաշվակցման կանոնները նույնպես չեն կարող օգնել լրացնել առկա բացը: Այսպես, թեև նշված կարգավորումներով սահմանվում է, որ մինչև դատավճռի օրինական ուժի մեջ մտնելը, անկախ Հայաստանի Հանրապետության իրավազորությունից, փաստացի անազատության մեջ գտնվելու ժամկետը հաշվակցվում է հանրային աշխատանքների դեպքում՝ 1 օրը 8 ժամի դիմաց, իսկ անազատության մեջ գտնվող անձի նկատմամբ տուգանքի ձևով հիմնական պատիժ նշանակելիս դատարանը, հաշվի առնելով մինչև դատավճիռ կայացնելը, անկախ Հայաստանի Հանրապետության իրավազորությունից, փաստացի անազատության մեջ գտնվելու ժամկետը, մեղմացնում է նշանակված պատիժը կամ ազատում է պատիժը կրելուց, միևնույն է անպատասխան է մնում այն հարցը, թե որքան կարող է լինել կալանքի ընդհանուր տևողությունը, եթե անձին մեղսագրվող արարքի համար պատիժ է նախատեսված միայն տուգանքը և հանրային աշխատանքներն այն պատճառով, որ ՀՀ քրեական օրենսգրքի 60-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված հանրային աշխատանքների առավելագույն տևողությունը՝ 270 ժամ, համապատասխանելու է անձի անազատության մեջ գտնվելու 33.75 օրվան, որը նվազ է մինչդատական վարույթում ոչ մեծ ծանրության հանցանքի համար մեղադրվող անձին կալանքի տակ պահելու առավելագույն ժամկետից՝ 4

ամիս, ուստի չի կարող կալանքի ընդհանուր տևողության հաշվարկի հիմք ընդունվել: Իրավիճակը նույնական է նաև տուգանքի դեպքում, որի պարագայում բացակայում է անգամ անազատության մեջ գտնվելու ժամանակահատվածի պատժին հաշվակցման հստակ չափը: Այսպիսով՝ ՀՀ քրեական օրենսգրքի 79-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ մասերով նախատեսված կարգավորումները կարող են կիրառվել փաստացի անազատության մեջ գտնվելու հաշվակցմամբ պատժի մեղմացման կամ դրանից ազատման հարցի շրջանակներում, սակայն չեն կարող կիրառվել ամբողջ վարույթի ընթացքում անազատության մեջ գտնվելու թույլատրելի առավելագույն չափը հաշվարկելիս:

Վերոգրյալով պայմանավորված՝ անգամ անալոգիայի կիրառմամբ հնարավոր չէ հաշվարկել, օրինակ, ՀՀ քրեական օրենսգրքի 182-րդ հոդվածի 1-ին մասով մեղադրվող անձին կալանքի տակ պահելու ընդհանուր տևողությունը, ինչն առաջացնում է իրավական անորոշություն, որի հաղթահարման միակ լուծումը համապատասխան օրենսդրական փոփոխություններն են:

Գ) Մինչդատական վարույթում կալանքի տակ պահելու առավելագույն ժամկետները

Ինչպես արդեն իսկ նշվել է, ակներև է, որ մինչդատական վարույթում կալանքի տակ պահելու առավելագույն ժամկետը հանդիսանում է հանրային քրեական հետապնդման առավելագույն ժամկետի և դրա երկարաձգման առավելագույն ժամկետի հանրագումարը (օրինակ՝ ծանր հանցանքի վերաբերյալ մեղադրանքով մինչդատական վարույթում հանրային քրեական հետապնդումն այն հարուցելու պահից չի կարող տևել ավելի, քան ութ ամիս, որը, բացառիկ դեպքերում կարող է երկարաձգվել առավելագույնը երկու ամսով, իսկ մինչդատական վարույթում կալանքի տակ պահելու առավելագույն ժամկետն, իր հերթին, ծանր հանցագործության համար մեղադրվելու դեպքում տասը ամիս է): Առաջին հայացքից նման կարգավորումը լիովին արդարացված է թվում՝ հաշվի առնելով, որ յուրաքանչյուր խափանման միջոց, այդ թվում՝ կալանքը, կարող է կիրառվել միայն մեղադրյալի նկատմամբ, որպիսի կարգավիճակն անձին տրվում է վերջինիս վերաբերյալ հանրային քրեական հետապնդում հարուցելու որոշման կայացմամբ (բացառությամբ մասնավոր կարգով իրականացվող քրեական հետապնդման), և հետևաբար մինչդատական վարույթում անձի նկատմամբ կիրառվող խափանման միջոցի ժամկետը չի կարող գերազանցել անձի այն կարգավիճակն ունենալու ժամկետը, որը խափանման միջոցի կիրառման պարտադիր նախապայմանն է:

Այնուամենայնիվ, մեր գնահատմամբ, նման կարգավորում նախատեսելիս հաշվի չի առնվել հանրային քրեական հետապնդման ժամկետը կասեցնելու ինստիտուտը: Այսպես, Նոր օրենսգրքի 193-րդ հոդվածի համաձայն՝ քրեական հետապնդման ժամկետը կարող է կասեցվել, ի թիվս այլնի, եթե առանց նշանակված փորձաքննության եզրակացությունը կամ առանց քրեական վարույթով իրավական օգնություն ցույց տալու մասին միջազգային հարցման պատասխանը ստանալու հնարավոր չէ լուծել մեղադրյալի նկատմամբ քրեական

հետապնդումը շարունակելու կամ այն դադարեցնելու հարցը: Ընդ որում, ոչ մեծ կամ միջին ծանրության հանցանքի վերաբերյալ մեղադրանքով քրեական հետապնդման ժամկետը կարող է կասեցվել երկու ամսից ոչ ավելի, իսկ ծանր կամ առանձնապես ծանր հանցանքի վերաբերյալ մեղադրանքով՝ չորս ամսից ոչ ավելի ժամկետով: Այսինքն, Նոր օրենսգրքով փաստացի նախատեսվել է հնարավորություն, որ անձը մեղադրյալի կարգավիճակ ունենա առավել երկար ժամանակահատվածում, քան հանրային քրեական հետապնդման առավելագույն ժամկետն է, քանի որ թեև քրեական հետապնդման ժամկետի կասեցումը դադարեցնում է ժամանակավորապես դրա հոսքը, այն չի վերացնում մեղադրյալի կարգավիճակը և չունի որևէ ազդեցություն մեղադրյալի նկատմամբ կիրառված խափանման միջոցի վրա: Այս առումով հարկ է նշել, որ քրեական հետապնդման և կալանքի ժամկետները միմյանցով պայմանավորված չեն: Մասնավորապես՝ քրեական հետապնդման ժամկետը հոսում է անկախ անձի նկատմամբ կիրառված հարկադրանքի միջոցի տեսակից, իսկ եթե առկա են քրեական հետապնդման իրականացմանը խոչընդոտող օբյեկտիվ հանգամանքներ, ապա այդ ժամկետը կարող է կասեցվել մինչև դրանց վերանալը: Իր հերթին, այդ կասեցումը չի ազդում կալանքի ժամկետի տևողության վրա³¹: Արդյունքում, առկա իրավակարգավորումներն անհնարին են դարձնում մինչդատական վարույթում անձի նկատմամբ պիտանի խափանման միջոցի (տվյալ դեպքում՝ կալանքի) կիրառումը համապատասխան հիմքերի առկայության պայմաններում լոկ այն պատճառով, որ լրացել է մինչդատական վարույթում կալանքի առավելագույն ժամկետը՝ անտեսելով այն հանգամանքները, որ մինչդատական վարույթը նույն անձի նկատմամբ նույն մեղադրանքով դեռևս շարունակվում է, և առկա են տվյալ խափանման միջոցը կիրառելու հիմքերը (օրինակ՝ մեղադրյալը դրսևորում է իր պարտականությունները չկատարելու շարունակական վարքագիծ):

Նման կարգավորումն անհամաչափորեն գերադասում է մասնավոր շահը՝ այդ թվում նաև զրկելով նախաքննական մարմնին իր լիազորությունները պատշաճ իրականացնելու հնարավորությունից, ինչպես նաև մեղադրյալի ոչ իրավաչափ հնարավոր հետագա վարքագիծը կանխելու և քննության բնականոն ընթացքն ապահովելու համար անհրաժեշտ գործիքակազմից, ինչն էլ հանգեցնում է հանրային շահի նսեմացման: Ավելին, առարկայազուրկ է թվում անձի ազատության իրավունքի սահմանափակումն ընդհանրապես, եթե ի վերջո, վարույթն իրականացնողը չի կարողանալու հասնել այն նպատակին, որի համար հենց իրավունքն անհրաժեշտ էր սահմանափակել:

Ավելին, հաշվի առնելով, որ ի տարբերություն Հին օրենսգրքի՝ Նոր օրենսգրքով հստակորեն սահմանվել է մինչդատական վարույթում անձի մեղադրյալի

³¹ Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության նոր օրենսգրքի հայեցակարգային լուծումների, նորարարական մոտեցումների և հիմնական ինստիտուտների մեկնաբանման գործնական ուղեցույց, 2022:

(Practical guide to interpreting conceptual solutions, innovative approaches and key institutions of the new Criminal Procedure Code of the Republic of Armenia, 2022).

կարգավիճակ ունենալու առավելագույն ժամկետը՝ առարկայազուրկ է թվում նաև մինչդատական վարույթում կալանքի տակ պահելու առավելագույն ժամկետի սահմանումը, հատկապես, նկատի ունենալով, որ վերջինս հաշվարկված է հանրային քրեական հետապնդման հնարավոր առավելագույն ժամկետների հիման վրա: Այլ խոսքով՝ հանրային քրեական հետապնդման հստակ ժամանակային սահմանափակումներն ինքնաբերաբար կարգավորում են նաև մեղադրյալին կալանքի տակ պահելու ժամկետները, քանի որ խափանման միջոցը կարող է կիրառվել միայն մեղադրյալի նկատմամբ, իսկ անձը մեղադրյալի կարգավիճակ կարող է ունենալ մինչդատական վարույթում միայն հստակ սահմանված ժամկետով:

Ամփոփելով վերոգրյալը՝ գտնում են, որ առկա է օրենսդրական փոփոխության անհրաժեշտություն, որը կա՛մ կնախատեսի մինչդատական վարույթում մեղադրյալին կալանքի տակ պահելու առավելագույն ժամկետը հաշվարկելիս նաև վերջինիս նկատմամբ հարուցված հանրային քրեական հետապնդման ժամկետը կասեցնելու ժամկետին համարժեք ժամկետ կա՛մ կվերացնի մինչդատական վարույթում մեղադրյալին կալանքի տակ պահելու ուղղակիորեն սահմանված ժամկետները:

Դ) Մինչդատական վարույթում կալանքի տակ պահելու առավելագույն ժամկետներն անչափահասին վերագրվող հանցանքի վերաբերյալ վարույթով

Նոր օրենսգրքում, հաշվի առնելով առանձին խումբ անձանց նկատմամբ իրականացվող վարույթներով առանձնահատուկ կարգավորումներ սահմանելու անհրաժեշտությունը, ընդհանուրից տարբերվող կարգավորումներ են նախատեսվել նաև անչափահասի անձնական ազատության իրավունքի սահմանափակումների վերաբերյալ: Նկատի ունենալով անչափահասներին՝ որպես առավել խոցելի խմբի, ազատությունների և իրավունքների միջամտություններից պաշտպանելու առավել բարձր աստիճան ունենալու անհրաժեշտությունը՝ օրենսդիրը լրացուցիչ երաշխիքներ է նախատեսել, որոնք արտահայտվել են անչափահասի նկատմամբ կիրառվող կալանքի առավելագույն ժամկետների նվազեցմամբ, ինչպես նաև կալանքի կիրառման նկատմամբ դատական վերահսկողության պարբերականության մեծացմամբ:

Այսպես, Նոր օրենսգրքով սահմանվել է, որ մինչդատական վարույթում անչափահասի նկատմամբ կալանքը կարող է կիրառվել, կամ դրա ժամկետը կարող է երկարաձգվել յուրաքանչյուր դեպքում մեկ ամսից ոչ ավելի ժամկետով³², իսկ որպես մինչդատական վարույթի կալանքի առավելագույն ժամկետ է նախատեսվել երկու ամիսը՝ ոչ մեծ կամ միջին ծանրության հանցագործության համար մեղադրվելու դեպքում, և վեց ամիսը՝ ծանր կամ առանձնապես ծանր հանցագործության համար մեղադրվելու դեպքում³³: Դրանից զատ, ամրագրվել է

³² 2021 թվականի հունիսի 30-ին ընդունված ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 414-րդ հոդվածի 6-րդ մաս:

(Part 6 of Article 414 of the Criminal Procedure Code of the Republic of Armenia adopted on June 30, 2021).

³³ Ibid.

նաև, որ մինչդատական վարույթում անչափահասի նկատմամբ իրականացվող քրեական հետապնդման ժամկետները երկարաձգվել չեն կարող՝ այնուամենայնիվ թույլատրելով առանձնապես ծանր հանցագործության համար մեղադրվող անչափահասի նկատմամբ կիրառվող կալանքի բացառիկ դեպքերում ևս երկու ամսով երկարաձգման հնարավորությունը³⁴։ Բացի այդ, սահմանվել է նաև անչափահասի նկատմամբ կալանքի կիրառման լրացուցիչ պայման՝ ոչ մեծ կամ միջին ծանրության հանցանքի կատարման մեջ մեղադրվող անչափահասի նկատմամբ կալանք կարող է կիրառվել միայն այն դեպքում, երբ նա խախտել է իր նկատմամբ կիրառված այլընտրանքային խափանման միջոցի պայմանները³⁵։

Մեր գնահատմամբ, նշված օրենսդրական կարգավորումները կրկին խոսում են հանրային և մասնավոր շահերի հավասարակշռված պաշտպանության սկզբունքի խախտման և մասնավորապես՝ մեղադրյալի շահերի անհամաչափ պաշտպանության մասին։ Այս առումով, ցանկանում ենք շեշտել, որ թեև ամբողջությամբ արդարացված է անչափահասների համար լրացուցիչ երաշխիքների և պաշտպանական առավել արդյունավետ մեխանիզմների նախատեսումը, այն չպետք է հանգեցնի վարույթի պարալիզացման։ Մասնավորապես՝ վերոնշյալ օրենսդրական կարգավորումները կրկին կյանքի իրավունք են տալիս այնպիսի իրավիճակների, երբ անչափահաս մեղադրյալը մինչդատական վարույթում կարող է շարունակել ունենալ մեղադրյալի կարգավիճակ, սակայն տվյալ իրավիճակում նրա նկատմամբ միակ պիտանի խափանման միջոցը՝ կալանքը, չի կարող կիրառվել օրենսդրական բացարձակ արգելքի պատճառով։ Այլ խոսքով՝ վարույթն իրականացնողը, անգամ այն պարագայում, երբ կալանքը միակ պիտանի խափանման միջոցն է և որևէ այլ խափանման միջոց ի գորու չէ չեզոքացնելու առկա ռիսկերը, ստիպված է լինելու հանդուրժել մեղադրյալի հակաիրավական վարքագիծ դրսևորելու վտանգը կամ անգամ դրա շարունակական դրսևորումը, քանի որ նրա ձեռքերը կապված են լինելու օրենսդրական արգելքով և այն հաղթահարելու անհրաժեշտ գործիքակազմի բացակայությամբ։ Բնական է, որ անհրաժեշտ խափանման միջոցի չկիրառումն իր հերթին կարող է անդառնալի վնաս հասցնել վարույթին և դրա բնականոն ընթացքով շահագրգռված այլ անձանց (օրինակ՝ տուժողի օրինական շահերին)։ Մյուս կողմից, դժվար է իր էությանմբ արհեստական նման կարգավորումն անհրաժեշտ համարել այն պատճառով, որ օրենսդրությունը բազմաթիվ այլ երաշխիքներ է նախատեսում՝ ուղղված անձի ազատության իրավունքի պաշտպանությանը (այլընտրանքային խափանման միջոցի կիրառման անհնարինությունը որպես կալանքի կիրառման պարտադիր պայման, հիմնավոր կասկած, նախնական դատական ստուգում և այլն), որոնք անգամ առավել ինտենսիվ են անչափահասների դեպքում (դաստիարակչական հսկողության հանձնելու հնարավորության պարտադիր քննարկում, անչափահասի նկատմամբ հարուցված հետապնդման ժամկետների երկարաձգման բացառում, ոչ մեծ և միջին ծանրության հանցանքների դեպքում

³⁴ Ibid.

³⁵ Ibid.

անչափահասի նկատմամբ կալանքի կիրառման ընդհանուր արգելք և այլն): Նշված երաշխիքները ոչ միայն բավարար են առկա խնդիրները լուծելու համար, այլև հնարավորություն են ընձեռում վարույթն իրականացնողին դրսևորելու ճկունություն և հաշվի առնելու յուրաքանչյուր դեպքի առանձնահատկությունները: Մինչդեռ, կալանքի առավելագույն հստակ ժամկետային սահմանափակումների քննարկվող կարգավորումները գործում են միակողմանիորեն՝ պաշտպանելով մեղադրյալի մասնավոր շահերը և անտեսելով վերջինիս ազատության սահմանափակման անհրաժեշտությունը և դրա հիմքում ընկած հանրային շահը:

Ամփոփելով վերոշարադրյալը՝ գտնում եմ, որ անչափահասին վերագրվող հանցանքի վերաբերյալ վարույթով մինչդատական վարույթում կալանքի տակ պահելու առավելագույն հստակ ժամկետների նախատեսումը հիմնավոր չէ: Մեր կարծիքով, տվյալ իրավիճակում ևս լավագույն լուծումը կլինի մինչդատական վարույթում կալանքի առավելագույն ժամկետների վերացումն այն հաշվառմամբ, որ առկա են հանրային քրեական հետապնդման ժամկետներ, որոնք անուղղակիորեն պաշտպանում են նաև մեղադրյալին իր ազատության իրավունքին կամայական և չհիմնավորված միջամտություններից, ընդ որում, նկատի ունենալով նաև, որ անչափահասների դեպքում առկա է նաև հանրային քրեական հետապնդման ժամկետների երկարաձգման արգելքի ձևով լրացուցիչ երաշխիք:

Ե) Դատական վարույթում կալանքի տակ պահելու առավելագույն ժամկետները

Հաջորդիվ, քննարկման է արժանի նաև այն հարցը, թե որքանով է **արդարացված** դատական վարույթում կալանքի տակ պահելու առավելագույն ժամկետների նախատեսումը և վերջինների **փոխկապակցումը** մեղադրյալին վերագրվող հանցանքի համար նախատեսված ազատագրկման ձևով պատժի առավելագույն ժամկետին:

Դիտարկելով դատական վարույթում կալանքի տակ պահելու առավելագույն ժամկետի հաշվարկման հիմքը՝ մեղադրյալին վերագրվող հանցանքի համար նախատեսված ազատագրկման ձևով պատժի առավելագույն ժամկետը՝ կարող ենք արձանագրել, որ օրենսդրական կարգավորման տրամաբանությունը հանգում է նրան, որ անձի ազատության իրավունքի դատավարական հարկադրանքի ձևով միջամտությունը որևէ պարագայում չգերազանցի այն հանցանքի համար նրան հասանելի առավելագույն պատժին, որի առնչությամբ հենց առկա է քրեադատավարական վեճը: Նման կերպ, փաստացի, բացառվում է, որ անձը կարող է խափանման միջոցի կիրառման արդյունքում ավելի շատ զրկանք կրել, քան այն հանցանքի համար, որի կատարումն իրեն մեղսագրվում է:

Նման կարգավորումը՝ ըստ իս, լավագույնը չէ մի շարք պատճառներով: Նախ, նման կարգավորմամբ ասիմիլացվում են էապես տարբերվող երկու կոնցեպտներ՝ պատիժը և քրեադատավարական հարկադրանքի միջոցը: Այս առումով հատկանշական է, որ ազատագրկումը և կալանքը թեև ունեն որոշակի նմանություն անձի ազատության իրավունքի սահմանափակման տեսանկյունից, դրանք էապես տարբերվում են իրենց բնույթով, կիրառման հիմքերով և նպատակներով: Այսպես,

Եթե ազատագրվումը պետական հարկադրանքի միջոց է, որը դատարանի դատավճռով պետության անունից նշանակվում է հանցագործության համար մեղավոր ճանաչված անձի նկատմամբ և արտահայտվում է դատապարտյալին քրեակատարողական հիմնարկում անազատության մեջ պահելու ձևով հասարակությունից որոշակի ժամկետով մեկուսացմամբ³⁶, ապա կալանքը քրեադատավարական հարկադրանքի միջոց հանդիսացող խափանման միջոց է, որը ենթադրում է իրավասու դատարանի որոշմամբ մեղադրյալին օրենքով նախատեսված դեպքերում և կարգով ազատությունից զրկելը՝ վերջինիս փախուստը կանխելու կամ նրա կողմից հանցանք կատարելը կանխելու կամ նրա կողմից իր վրա քրեական դատավարության օրենսգրքով կամ դատարանի որոշմամբ դրված պարտականությունների կատարումն ապահովելու համար³⁷: Ազատագրվման և կալանքի հիմնական տարբերությունն այն է, որ վերջինը կիրառվում է որպես պրևենտիվ գործիք՝ ուղղված ապագայում մեղադրյալի իրավաչափ վարքագծի ապահովմանը, այլ ոչ թե նրա անցյալի վարքի գնահատական՝ իրավական պատասխանատվության ձևով: Կալանքը, որպես կանոն, կիրառվում է անձի նկատմամբ, երբ վերջինիս անմեղության կանխավարկածը դեռևս հաղթահարված չէ: Վերոգրյալով պայմանավորված՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով նախատեսվել է, որ վարույթի ընթացքում անձին ազատությունից զրկելը չպետք է պատժի նպատակ հետապնդի³⁸: Քրեական և քրեադատավարական նշված երկու ինստիտուտների հստակ տարանջատմանն է ուղղված եղել նաև ՀՀ քրեական նոր օրենսգրքում **կալանք** պատժատեսակի անվանախոփությունը **կարճաժամկետ ազատագրվում** եզրույթով: ՀՀ սահմանադրական դատարանը նույնպես այս հարցի շուրջ արձանագրել է, որ կալանավորման վերաբերյալ ընդունված որոշումը ոչ թե անձին դատապարտող ակտ է, այլ արդյունավետ ու անաչառ արդարադատություն իրականացնելու, Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի 5 հոդվածի պահանջների կատարումն ապահովող նախապայման³⁹:

Այնուամենայնիվ, ինչպես նշվեց, օրենսդիրը, ըստ էության, նպատակ է հետապնդել բացառելու այն իրավիճակը, երբ անձը փաստացի կգտնվի անազատության մեջ ավելին, քան իրեն մեղսագրվող հանցանքի օրենսդրությամբ սահմանված առավելագույն ժամկետն է՝ ելնելով այն տրամաբանությունից, որ անազատության մեջ գտնվելու ժամկետը հաշվանցվում է նշանակված պատժի ժամկետից (կիրառված կալանքի մեկ օրը հավասարագոր է ազատագրվման մեկ օրվան), որի կապակցությամբ էլ անհրաժեշտ է կատարել մի քանի դիտարկում:

³⁶ 2021 թվականի մայիսի 5-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 67-րդ հոդվածի 1-ին մաս: (Part 1 of Article 67 of the Criminal Code of the Republic of Armenia adopted on May 5, 2021).

³⁷ 2021 թվականի հունիսի 30-ին ընդունված ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 118-րդ հոդվածի 1-ին մաս:

(Part 1 of Article 118 of the Criminal Procedure Code of the Republic of Armenia adopted on June 30, 2021).

³⁸ *Ibid*, 18-րդ հոդվածի 1-ին մաս, Part 1 of Article 18.

³⁹ ՀՀ սահմանադրական դատարանի 2009 թվականի սեպտեմբերի 12-ի թիվ ՍԴՈ-827 որոշում: (Decision No. SDO-827 of the Constitutional Court of the Republic of Armenia of September 12, 2009).

Կալանքի և պատժի փոխկապակցումը խնդրահարույց է առաջին հերթին մեղադրյալի անմեղության կանխավարկածի տեսանկյունից: Այսպես, կալանքի առավելագույն ժամկետը մեղադրյալին վերագրվող արարքի համար նախատեսված պատժի հետ փոխկապակցելը տպավորություն է ստեղծում, թե կալանավորված անձը դատարանի վերջնական ակտով միշտ ենթակա է դատապարտման և պատժի: Այնինչ, ինչպես նախորդիվ արդեն իսկ նշվել է, կալանքը կիրառվում է անձի նկատմամբ, երբ վերջինիս անմեղության կանխավարկածը դեռևս հաղթահարված չէ և որևէ պարագայում վարույթի որևէ փուլում մեղադրյալի նկատմամբ որևէ խափանման միջոցի կիրառումը չի կարող պայմանավորել վարույթի ելքը կամ նշանակվող պատիժը: Հետևաբար, հնարավոր են իրավիճակներ, երբ անձը, ում ազատության իրավունքը կալանքի կիրառման արդյունքում սահմանափակվել է, անմեղ ճանաչվի, որի պարագայում խոսք գնալ արդեն չի կարող ո՛չ ազատագրկման ձևով պատժի մասին, ո՛չ էլ դրանից հաշվանցման: Արդյունքում, օրենսդրի այն մոտեցումը, որ մեղադրյալը չպետք է ազատագրված լինի խափանման միջոցի կիրառման արդյունքում ավելի երկար ժամկետով, քան կլինեիր իրեն մեղսագրվող արարքի կատարման համար դատապարտվելու արդյունքում նշանակված պատիժը կրելիս, առարկայագուրկ է, քանի որ վարույթի ելքը չի կարող կանխորոշված լինել անձին կալանավորելիս, իսկ վերջինիս անմեղ ճանաչվելու դեպքում յուրաքանչյուր ազատությունից զրկման օր գերազանցելու է նրան «հասանելի» պատիժը:

Բացի այդ, անհրաժեշտ է նկատի ունենալ, որ հնարավոր են դեպքեր, երբ մեղադրյալին վերագրվում են մեկից ավելի հանցանքներ, որոնց համար նախատեսված է ազատագրկման ձևով պատիժ: Այս առումով կարող է առաջանալ այն հարցը, թե ինչպես պետք է հաշվարկել կալանքի առավելագույն ժամկետը նշված դեպքում: Կալանքի ընդհանուր տևողության վերաբերյալ օրենսդրական կարգավորումը ենթադրում է մեղադրյալին վերագրվող միայն մեկ հանցանքի համար նախատեսված ազատագրկման ձևով պատժի առավելագույն ժամկետի հաշվարկ, որից կարող ենք ողջամտորեն եզրակացնել, որ մի քանի հանցանքների առավելագույն ժամկետները չեն կարող գումարվել և հիմք հանդիսանալ կալանքի առավելագույն ժամկետը հաշվարկելիս, և թեև որևէ կարգավորում նախատեսված չէ առ այն, թե անձին մեղսագրվող մի քանի հանցանքից կոնկրետ որի առավելագույն ժամկետով պետք է առաջնորդվել, այնուամենայնիվ, կարգավորման ընդհանուր տրամաբանությանը համահունչ է որպես ելակետ ընդունելն առավել ծանր հանցանքի համար նախատեսված պատժի ժամկետը, իսկ եթե վերագրվող արարքները միևնույն ծանրության են, ապա պետք է հիմք ընդունել առավել խիստ պատիժ նախատեսող հանցանքի համար նախատեսված պատժի ժամկետը:

Վերոգրյալի լույսի ներքո զուգահեռներ անցկացնելով հանցագործությունների համակցության դեպքում պատժի նշանակման կանոններին՝ պետք է արձանագրել, որ բազմադրվագ հանցանքներով վարույթների դեպքում վերջնական պատիժը նշանակվում է պատիժները լրիվ կամ մասնակիորեն գումարելու

միջոցով⁴⁰, որի արդյունքում վերջնական պատիժը կարող է գերազանցել անձին մեղսագրվող առավել ծանր հանցանքի համար ազատազրկման ձևով նախատեսված պատժի առավելագույն ժամկետը (օրինակ՝ եթե անձին մեղսագրվում է 3 դրվագ ՀՀ քրեական օրենսգրքի 166-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված արարքի կատարում, ապա ազատազրկման ձևով վերջնական պատիժը չի կարող գերազանցել 15 տարին⁴¹, մինչդեռ տվյալ արարքի համար նախատեսված է 3-ից 6 տարի ժամկետով ազատազրկում), ուստի առաջանալու է կալանքի արդյունքում ազատազրկման ընդհանուր տևողության և մեղադրյալի հնարավոր դատապարտման դեպքում ազատազրկման ժամկետի միջև համապատասխանության բացակայություն, որն ի սկզբանե կալանքի առավելագույն ժամկետի վերաբերյալ կարգավորման հիմքում է դրված եղել:

Հաջորդիվ, անհրաժեշտ է ընդգծել, որ հնարավոր են վարույթներ, որոնցով արդարադատություն իրականացվում է, սակայն մեղադրական վերդիկտ կայացնելու դեպքում օրենսդիրը բացառում է մեղադրյալի նկատմամբ պատժի նշանակումը: Խոսքը վերաբերում է այն իրավիճակներին, երբ անձն առարկում է քրեական հետապնդումը ոչ ռեաբիլիտացնող հիմքով դադարեցնելու կամ այն չհարուցելու դեմ այն հիմքով, որ չի կատարել իրեն մեղսագրվող արարքը⁴²: Այս համատեքստում կարևոր է անդրադառնալ մասնագետների տարակարծությանը հանգեցրած այն հարցին, թե կարո՞ղ են արդյոք մեղադրյալի նկատմամբ կիրառվել խափանման միջոցները, այդ թվում նաև՝ կալանքը, այն դեպքում, երբ առկա է Նոր օրենսգրքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 12-ից 14-րդ կետերով նախատեսված քրեական հետապնդումը բացառող հանգամանքներից որևէ մեկը, եթե մեղադրյալն առարկում է համապատասխան հիմքով քրեական հետապնդումը դադարեցնելու դեմ:

Մասնագետների մի մասը գտնում է, որ նկարագրված իրավիճակում խափանման միջոց չի կարող կիրառվել, որպիսի դատողությունը հիմնավորվում է Նոր օրենսգրքի 288-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով նախատեսված կարգավորմամբ այն մասին, որ դատարանը պետք է մերժի խափանման միջոց կիրառելու կամ կիրառված խափանման միջոցի ժամկետը երկարաձգելու միջնորդությունը, եթե հայտնաբերում է նույն օրենսգրքի 12-րդ հոդվածով նախատեսված **որևէ հանգամանք**:

Բարձրացված հարցին պատասխանելու համար, ըստ իս, նախ և առաջ անհրաժեշտ է դիտարկել Նոր օրենսգրքի 12-րդ հոդվածի կարգավորումներն առանձնացված, ապա նաև 288-րդ հոդվածի հետ համակցության մեջ: Այսպես, Նոր օրենսգրքի 12-րդ հոդվածը նախատեսում է քրեական հետապնդումը բացառող 14 առանձին հանգամանք և տարանջատում դրանք 2 խմբի՝ ռեաբիլիտացնող

⁴⁰ 2021 թվականի մայիսի 5-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 74-րդ հոդվածի 1-ին մաս: (Part 1 of Article 74 of the Criminal Code of the Republic of Armenia adopted on May 5, 2021).

⁴¹ *Ibid*, 4-րդ մաս, Part 4.

⁴² 2021 թվականի հունիսի 30-ին ընդունված ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 12-րդ հոդված:

(Article 12 of the Criminal Procedure Code of the Republic of Armenia adopted on June 30, 2021).

և ոչ ռեաբիլիտացնող: Մյուս կողմից, նշված 14 հանգամանքներն իրենց էությամբ կարելի է առանձնացնել նաև 2 այլ խմբի՝ **պարտադիր** և **պայմանական**, ընդ որում, պարտադիր են ռեաբիլիտացնող հանգամանքները, իսկ ոչ ռեաբիլիտացնողները՝ պայմանական: Քրեական հետապնդումը բացառող ռեաբիլիտացնող հանգամանքները պարտադիր են, քանի որ դրանց առկայության դեպքում քրեական հետապնդում չպետք է հարուցվի, իսկ հարուցված քրեական հետապնդումը ենթակա է դադարեցման անպայմանորեն՝ անկախ որևէ անձի կամահայտնությունից: Ոչ ռեաբիլիտացնող հանգամանքները, իրենց հերթին, պայմանական են, քանի որ դրանց դեպքում համապատասխան հանգամանքի գոյությունն ինքնին բավարար չէ քրեական հետապնդումը դադարեցնելու կամ այն չհարուցելու համար, և անհրաժեշտ է, որպեսզի բավարարված լինի լրացուցիչ մեկ այլ պայման՝ անձը, ում նկատմամբ հետապնդումը պետք է չհարուցվի կամ դադարեցվի, կամ վերջինիս մահվան դեպքում նրա շահերը ներկայացնողը չառարկի տվյալ հիմքով քրեական հետապնդումը չհարուցելու կամ այն դադարեցնելու դեմ: Այլ խոսքով՝ պայմանական հանգամանքները քրեական հետապնդումը բացառող չեն, եթե դրանց հիման վրա քրեական հետապնդումը դադարեցնելու կամ այն չհարուցելու դեմ առարկում է տվյալ անձը կամ վերջինիս մահվան դեպքում նրա շահերը ներկայացնող անձը: Քրեական հետապնդումը պայմանական բացառող որևէ հանգամանքի առկայության դեպքում, երբ անձն առարկում է քրեական հետապնդում չհարուցելու կամ այն դադարեցնելու դեմ, քրեական վարույթը շարունակվում է **ընդհանուր կարգով**, իսկ միակ շեղումն ընդհանուր կարգից մեղադրական վերդիկտ կայացնելու դեպքում անձի նկատմամբ պատիժ նշանակելու արգելքն է⁴³: Այսինքն՝ Նոր օրենսգրքի 12-րդ հոդվածով նախատեսված քրեական հետապնդումը պայմանական բացառող որևէ հանգամանքի առկայության դեպքում անգամ քրեական հետապնդումը հարուցվում և շարունակվում է, երբ բավարարված չէ վերոնշյալ լրացուցիչ պայմանը:

Անդրադառնալով Նոր օրենսգրքի 288-րդ հոդվածի հիշատակված կարգավորմանը՝ հարկ է նշել, որ դրանում առկա «որևէ հանգամանք» եզրույթը ենթադրում է **քրեական հետապնդումը բացառող** որևէ հանգամանք, ինչը բխում է այն տրամաբանությունից, որ քրեական հետապնդման բացառումը՝ դադարեցումը կամ հարուցման արգելքը, անպայմանորեն հանգեցնելու է մեղադրյալի դատավարական կարգավիճակի դադարեցմանը կամ այն ձեռք բերելու արգելքին, իսկ առանց մեղադրյալի կարգավիճակի խոսք չի կարող գնալ անձի նկատմամբ խափանման միջոց կիրառելու մասին: Միևնույն ժամանակ, քրեական հետապնդումը պայմանական բացառող հանգամանքները, անձի առարկության առկայության պայմաններում, քրեական հետապնդումը բացառող չեն, վերջիններիս առկայությունը չի հանգեցնում խափանման միջոցի կիրառման անհնարինության մեղադրյալի դատավարական կարգավիճակի պարտադիր դադարեցման կամ այն ձեռք բերելու արգելքի հիմքով, ուստի դրանք չեն կարող համարվել Նոր օրենսգրքի 288-րդ հոդվածի կարգավորման տեսանկյունից նույն օրենսգրքի 12-րդ

⁴³ Ibid, 4-րդ մաս, Part 4.

հողվածով նախատեսված **որևէ հանգամանք**: Հետևաբար, Նոր օրենսգրքի 288-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետը պետք է կիրառվի միայն քրեական հետապնդումը բացառող ռեաբիլիտացնող (պարտադիր) հանգամանքների առկայության, ինչպես նաև անձի առարկության բացակայության դեպքում ոչ ռեաբիլիտացնող (պայմանական) հանգամանքների առկայության դեպքում: Իր հերթին, անձի առարկության պայմաններում քրեական հետապնդումը պայմանական բացառող որևէ հանգամանքի առկայությունը հիմք չի կարող լինել խափանման միջոցի կիրառման բացառման համար: Հակառակ մոտեցումն անտեսում է քրեական հետապնդումը դադարեցնելու կամ այն չհարուցելու դեմ անձի առարկության և քրեական հետապնդումը բացառող ոչ ռեաբիլիտացնող հանգամանքի առկայության դեպքում քրեական վարույթն **ընդհանուր կարգով**, այսինքն՝ առանց բացառությունների, շարունակելու օրենսդրի կամքը և արժեզրկում է արդարադատության շահը՝ զրկելով վարույթն իրականացնող մարմնին մեղադրյալի ոչ իրավաչափ վարքագիծ դրսևորելու ռիսկը զսպելու հնարավորությունից: Մինչդեռ, արդարադատության շահի և դրա ապահովման համար խափանման միջոց կիրառելու տեսանկյունից չի կարող որևէ նշանակություն ունենալ՝ դատաքնության արդյունքում պատիժ կարող է նշանակվել, թե ոչ, քանի որ պատիժն արդարադատության տարրերից ընդամենը մեկն է, այլ ոչ թե դրա առանցքը, ուստի խափանման միջոցի կիրառման դիտանկյունից չկա սկզբունքային տարբերություն քրեական հետապնդումը բացառող ոչ ռեաբիլիտացնող հանգամանքի առկայության պայմաններում ընթացող վարույթի և ընդհանուր վարույթի միջև:

Արդյունքում, կարող ենք արձանագրել, որ Նոր օրենսգրքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 12-ից 14-րդ կետերով նախատեսված քրեական հետապնդումը բացառող ոչ ռեաբիլիտացնող հանգամանքներից որևէ մեկի առկայության պայմաններում շարունակվող վարույթով մեղադրյալի նկատմամբ ընդհանուր կարգով կարող է կիրառվել ցանկացած պիտանի և համաչափ խափանման միջոց, այդ թվում նաև՝ կալանք:

Վերոգրյալ վարույթներով, ելնելով կրկին ազատության իրավունքի սահմանափակման համաչափությունից և հանրային շահի պաշտպանության անհրաժեշտությունից, դատարանը, ինչպես նշվեց, կարող է մեղադրյալի նկատմամբ կիրառել նաև կալանքը որպես խափանման միջոց (օրինակ՝ մեղադրյալն այն աստիճան անօրինական ազդեցություն է գործադրում դատավարության մասնակիցների վրա, որ հարկադրանքի այլ միջոց ի զորու չէ ապահովել նրա պատշաճ վարքագիծը): Արդյունքում, ինչպես անձի անմեղ ճանաչվելու դեպքում, տվյալ իրավիճակում ևս, առկա է կալանքի ընդհանուր տևողության հիմքում ընկած օրենսդրի այն գաղափարից շեղում, համաձայն որի՝ մեղադրյալը չպետք է ազատագրված լինի խափանման միջոցի կիրառման արդյունքում ավելի երկար ժամկետով, քան կլինեն իրեն մեղսագրվող արարքի կատարման համար դատապարտվելու արդյունքում նշանակված պատիժը կրելիս: Այս համատեքստում կարևոր է նշել, որ ըստ իս՝ նշված վարույթներով կալանքը կարող է կիրառվել

միայն մեղադրյալի կողմից իր նկատմամբ կիրառված այլընտրանքային խափանման միջոցի պայմանները խախտելու դեպքում, ինչը համահունչ է մեղադրյալին վերագրվող հանցանքի համար ազատությունից զրկելու հետ կապված պատիժ նախատեսված չլինելու դեպքում կալանավորման հնարավորության վերաբերյալ կարգավորմանը, քանի որ երկու դեպքում էլ, ըստ էության, չի կարող մեղադրյալի նկատմամբ ազատագրկման ձևով պատիժ նշանակվել վարույթի ցանկացած ելքի դեպքում:

Իրավիճակը նույնական է նաև այն դեպքում, երբ անձն առաջին անգամ ոչ մեծ ծանրության հանցանք է կատարում, քանի որ անկախ այն հանգամանքից՝ տվյալ հանցանքը նախատեսող հոդվածի սանկցիայով առկա է ազատագրկում պատիժը, թե ոչ, ՀՀ քրեական օրենսգրքի Ընդհանուր մասի կարգավորումների⁴⁴ ուժով մեղադրյալը չի կարող դատապարտվել ազատագրկման, մինչդեռ չկա որևէ արգելք նրա նկատմամբ վարույթի ընթացքում կալանքը որպես խափանման միջոց կիրառելու վերաբերյալ:

Վերոգրյալից զատ, անհրաժեշտ է առանձին ուշադրության արժանացնել կալանքի ընդհանուր տևողության կոնկրետ ժամկետներին՝ իրենց հնարավոր չափազանցության (*excessivity*) տեսանկյունից: Այսպես, եթե ոչ մեծ և միջին ծանրության հանցանքների դեպքում կալանքի ընդհանուր տևողության առավելագույն ժամկետներն առերևույթ խնդրահարույց չեն թվում, քանի որ դրանք չեն կարող գերազանցել համապատասխանաբար 2 և 5 տարին, ապա իրավիճակն էապես տարբերվում է առավել ծանր հանցանքների դեպքում: Ծանր հանցանքների դեպքում կալանքի ընդհանուր տևողության առավելագույն հնարավոր ժամկետը 5-ից մինչև 10 տարին է, իսկ առանձնապես ծանր հանցանքների դեպքում՝ 10-ից ընդհուպ մինչև 20 տարին: Վերոգրյալի առնչությամբ հարկ է նշել, որ անգամ այն պայմաններում, որ նշված ժամկետներն ինքնին չեն նշանակում, որ իրավաչափ և անհրաժեշտ կարող է լինել առավելագույն ժամկետով կալանքի տակ անձին պահելը, նման չափազանցված ժամկետների գոյությունը և կիրառման տեսական հնարավորությունն արդեն իսկ խնդրահարույց է: Այսպես, օրենսդրական նման կարգավորումը, չբացառելով կալանքի կիրառումը վարույթի ընթացքում նման ժամկետով, պրակտիկայում կարող է ընկալվել որպես «նորմա», որի պարագայում նշված առավելագույն սահմանաչափից նվազ ժամկետով կալանքի տակ անձին պահելը *a priori* խնդրահարույց չէ: Վերացարկվելով նախորդ մտքից՝ վարությանին հնարավոր բոլոր բարդությունների և առանձնահատկությունների հաշվառմամբ անգամ դժվար է պատկերացնել մի իրավիճակ, որում կարող է հիմնավոր և իրավաչափ համարվել անմեղության կանխավարկածի չհաղթահարման պայմաններում անձին ազատությունից նման տևական ժամկետով զրկելը: Ավելին, նման ժամկետները ոչ միայն խնդրահարույց են մեղադրյալի անձնական ազատության իրավունքին տևական միջամտության տեսանկյունից, այլ նաև արդար դատաքննության բաղկացուցիչ տարր հանդի-

⁴⁴ 2021 թվականի մայիսի 5-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 67-րդ հոդվածի 5-րդ մաս: (Part 5 of Article 67 of the Criminal Code of the Republic of Armenia adopted on May 5, 2021).

սացող ողջամիտ ժամկետում գործի քննության սկզբունքի համատեքստում: Չնայած գործի քննության ողջամիտ ժամկետը չունի ընդհանուր, բոլոր իրավիճակների համար կիրառելի թվային արտահայտություն և ենթակա է գնահատման յուրաքանչյուր դեպքում՝ հաշվի առնելով կոնկրետ գործի հանգամանքները⁴⁵, այնուամենայնիվ, գոյություն ունեն որոշակի ուղենիշային ընդհանրական ժամկետներ, որոնցից էական շեղումները գրեթե անհնար են դարձնում սկզբունքի խախտման բացակայությունը: Օրինակ, Մարդու իրավունքների եվրոպական դատարանը որպես կանոն ոչ բարդ գործերի քննության համար ողջամիտ է համարում 2 տարին և մինչև 5 տարին բարդ գործերի համար, խիստ հազվադեպ դեպքերում ողջամիտ է համարվել 5 տարին գերազանցող ժամկետը, սակայն գրեթե երբեք ողջամիտ չի համարվել գործի քննության ժամկետը, որը գերազանցել է 8 տարին⁴⁶: Իր հերթին, եթե որևէ ժամկետ տեսականորեն անգամ ողջամիտ չէ գործի ընդհանուր քննության համար, ավելորդ է խոսել նրանից, որ իրավաչափ և հիմնավոր կարող է լինել նման ժամկետով նույն գործի ընթացքում անձին անազատության մեջ պահելը: Վերոգրյալը, ըստ իս, վկայում է կալանքի առավելագույն ժամկետների էական նվազեցման անհրաժեշտության և դրանք պատժի առավելագույն ժամկետներին փոխկապակցելու աննպատակահարմարության մասին:

Բերված օրինակներն ընդգծում են խափանման միջոցի և պատժի միջև առկա էական տարբերությունները, ինչպես նաև մեղադրյալին վերագրվող հանցանքի համար նախատեսված ազատազրկման ձևով պատժի առավելագույն ժամկետին կալանքի ընդհանուր տևողության փոխկապակցման մասով առկա կարգավորման խնդրահարույց լինելը:

Իր հերթին, կալանքի առավելագույն բացարձակ ժամկետների նախատեսումը կարող է խնդրահարույց լինել հանրային շահի պաշտպանության տեսանկյունից, ուստի նման կարգավորումը ևս չի կարող համարվել լավագույնը:

Բարձրացված խնդրի լուծման հնարավոր տարբերակ է առկա կարգավորման փոխարեն կալանքի առավելագույն հստակ ժամկետների սահմանումը (առանց պատժին փոխկապակցման)⁴⁷ բացառիկ դեպքերում սահմանված առավելագույն ժամկետը երկարաձգելու հնարավորության նախատեսմամբ:

Խնդրի հնարավոր լուծման մեկ այլ տարբերակ է ընդհանրապես դատաքննության փուլում կալանքի առավելագույն ժամկետները նախատեսող նորմի բացառումը՝ ելնելով այն տրամաբանությունից, որ դատաքննությունում վարույթն իրականացնող մարմին է հանդիսանում դատարանը, որը որպես անաչառ արբիտր և ի պաշտոնե արդարադատության իրականացնող մարմին՝ պարտավոր է առավելագույնս երաշխավորել անձի հիմնարար իրավունքների ապահովումը: Ավելին, դատարանը կալանքի ժամկետը երկարաձգելիս պարտավոր է նաև

⁴⁵ ՀՀ սահմանադրական դատարանի 2021 թվականի մարտի 16-ի թիվ ՍԴՈ-1585 որոշում: (Decision No. SDO-1585 of the Constitutional Court of the Republic of Armenia of March 16, 2021).

⁴⁶ <https://blogs.worldbank.org/en/europeandcentralasia/how-long-too-long-when-justice-delayed-justice-denied> (մուտք/access 09/10/2025).

գնահատել իր իսկ դրսևորած պատշաճ ջանասիրությունը⁴⁷, ինչն այլ երաշխիքների՝ այդ թվում նաև դատաքննության փուլում կալանքի իրավաչափության առնվազն եռամսյա ստուգման պարտականության հետ համակցության մեջ ինքնին բավարար է անձի ազատության իրավունքն իրացման առավելագույնս ապահովման և այն կամայական միջամտությունից պաշտպանելու տեսանկյունից:

Մեկ այլ հնարավոր լուծման տարբերակ կարող է լինել այնպիսի կարգավորման նախատեսումը, ըստ որի՝ մեղադրյալի նկատմամբ կիրառված այլընտրանքային խափանման միջոցի պայմանը խախտելու դեպքում, եթե առավել պիտանի միակ խափանման միջոցը կալանքն է, հնարավորություն ընձեռնվի վերջինիս նկատմամբ կալանք կիրառել՝ անկախ այն հանգամանքից՝ լրացել է կալանքի ընդհանուր առավելագույն ժամկետը, թե ոչ: Վերոգրյալը բխում է նաև օրենսդրի այն տրամաբանությունից, որ ազատագրված ձևով պատիժ չնախատեսող հանցանքների դեպքում ևս կարող է կիրառվել կալանք, եթե մեղադրյալը խախտում է խափանման միջոցի պայմանները:

4. Այլ երկրների փորձ

Սույն հոդվածով բարձրացված իրավական հարցերի շրջանակներում ըստ իս՝ օգտակար կարող է լինել նաև այլ երկրների լավագույն փորձի ուսումնասիրումը: Խոսքն առաջին հերթին գնում է զարգացած իրավական մշակույթ ունեցող և ՀՀ իրավական համակարգին մոտ իրավական համակարգ ունեցող պետությունների մասին: Ուստի, հաջորդիվ կանդրադառնանք Գերմանիայի, Ռուսաստանի և Միացյալ Թագավորության քրեական դատավարության օրենսդրություններում առկա կալանքի ժամկետների վերաբերյալ կարգավորումներին:

Ա) Գերմանիա

Գերմանիայի Ֆեդերատիվ Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքով (*Strafprozeßordnung* – *StPO*) նախատեսված է մինչդատական կալանքի (*Untersuchungshaft*) 6-ամսյա առավելագույն ժամկետ, որը, այնուամենայնիվ, գործի առանձնահատուկ բարդության կամ այլ կարևոր պատճառների հաշվառմամբ կարող է բացառիկ դեպքերում երկարաձգվել⁴⁸: Նման երկարաձգումը պետք է վերանայվի առնվազն յուրաքանչյուր 3 ամիսը մեկ՝ շարունակական կալանքի հիմնավորվածության և անհրաժեշտության պարբերական ստուգումն ապահովելու համար⁴⁹: Իր հերթին, առկա չէ երկարաձգման առավելագույն ժամկետ, ուստի այն, տեսականորեն կարող է երկարաձգվել անսահմանափակ: Միննույն ժամանակ, Գերմանական քրեադատավարական օրենսդրությունը չի ամրագրել նախաքննության կամ քրեական հետապնդման ժամանակային որևէ կոնկրետ սահմանափակում: Բացի այդ, բացակայում են նաև դատական վարույթում կալանքի կիրառման ժամանակային սահմանափակումները:

⁴⁷ ՀՀ սահմանադրական դատարանի 2025 թվականի հուլիսի 30-ի թիվ ՍԴՈ-1792 որոշում: (Decision No. SDO-1792 of the Constitutional Court of the Republic of Armenia of July 30, 2025).

⁴⁸ Article 121 of the German Code of Criminal Procedure (*Strafprozeßordnung* – *StPO*) as last amended by Article 6 of the Act of 21 February 2024 (Federal Law Gazette 2024 I, No. 54).

https://www.gesetze-im-internet.de/englisch_stpo/englisch_stpo.html (մուսնված 14/09/2025).

⁴⁹ *Ibid*, Article 122.

Բ) Ռուսաստան

Ռուսաստանի Դաշնության քրեական դատավարության օրենսգիրքը սահմանում է, որ նախաքննության ընթացքում կալանքի տակ գտնվելու ժամկետը չպետք է գերազանցի երկու ամիսը⁵⁰: Բայցևայնպես, կալանքի ժամկետը կարող է երկարաձգվել մինչև 6 ամիս այն անձանց համար, ովքեր մեղադրվում են ոչ մեծ կամ միջին ծանրության հանցագործություններ կատարելու մեջ, եթե նախաքննությունը պետք է շարունակվի, և չկան խափանման միջոցը վերացնելու կամ փոխելու հիմքեր⁵¹: Կալանքի ժամկետը կարող է երկարաձգվել մինչև 12 ամիս, եթե անձը մեղադրվում է ծանր հանցագործություն կատարելու մեջ, իսկ առանձնապես ծանրի դեպքում՝ մինչև 18 ամիս⁵²:

Կալանքի այլ ժամկետներ են նախատեսված դատական վարույթի փուլում: Այսպես, կալանքի ժամկետը չպետք է գերազանցի 6 ամիսը՝ սկսած քրեական գործը դատարանի կողմից ստանալու օրվանից մինչև դատավճռի կայացումը⁵³: Դատարանի կողմից քննության ընթացքում քրեական գործով կալանքի ժամկետի 6 ամսից ավելի երկարաձգումը հնարավոր է միայն ծանր կամ առանձնապես ծանր հանցագործությունների վերաբերյալ գործերով և ամեն անգամ ոչ ավելի, քան 3 ամիս ժամկետով⁵⁴: Դատական փուլում կալանքի երկարաձգման ժամկետի որևէ սահմանափակում առկա չէ, ինչը նշանակում է, որ, տեսականորեն, կալանքի ժամկետը դատական փուլում կարող է երկարաձգվել անվերջ թվով անգամներ:

Գ) Միացյալ Թագավորություն

Միացյալ Թագավորության «Կալանքի ժամկետների» 1987 թվականի կանոնակարգի⁵⁵ համաձայն անձին մեղադրանք առաջադրելուց և կալանքի վերցնելուց հետո գործը պետք է փոխանցվի ըստ էության քննության ծանր հանցանքների դեպքում (*indictable offences*) 182 օրվա ընթացքում՝ գործը Թագավորական դատարանի (*Crown Court*) հսկողությանը փոխանցելու կամ հանձնելու օրվանից⁵⁶ և առաջին անգամ դատարան ներկայացվելու օրվանից 56 օրվա ընթացքում, եթե մեղադրյալը ենթադրաբար կատարել է նվազ վտանգավոր արարք (*summary or either-way offences*)⁵⁷: Օրենսդրությամբ նախատեսված է նաև նշված ժամկետների առանց հստակ սահմանափակումների երկարաձգման հնարավորությունը, եթե կան այն հիմնավորող բավարար պատճառներ, իսկ քրեական հետապնդման մարմինները ցուցաբերել են պատշաճ ջանասիրություն⁵⁸:

⁵⁰ Ст. 109, Уголовно-процессуальный кодекс Российской Федерации от 18.12.2001 N174-ФЗ.
(Article 109 of the Criminal Procedure Code of the Russian Federation of 18.12.2001 N174-FZ)
https://www.consultant.ru/document/cons_doc_LAW_34481/ (մուտք/access 14/09/2025).

⁵¹ *Ibid.*

⁵² *Ibid.*

⁵³ *Ibid.*, Ст. 255, Article 255.

⁵⁴ *Ibid.*

⁵⁵ The Prosecution of Offences (Custody Time Limits) Regulations 1987/299.

⁵⁶ *Ibid.*, Regulation 5 <https://www.legislation.gov.uk/uksi/1987/299/regulation/5> (մուտք/access 14/09/2025).

⁵⁷ *Ibid.*, Regulation 4 <https://www.legislation.gov.uk/uksi/1987/299/regulation/4> (մուտք/access 14/09/2025).

⁵⁸ Prosecution of Offences Act (1985), Section 22.

<https://www.legislation.gov.uk/ukpga/1985/23> (մուտք/access 14/09/2025).

Հատկանշական է, որ սահմանափակումները վերաբերում են յուրաքանչյուր մեղադրանքի, այլ ոչ թե ենթադրյալ հանցագործին: Յուրաքանչյուր մեղադրանք ունի իր սեփական սահմանափակումները⁵⁹: Դատաքննության փուլում կալանքի ժամկետների վերաբերյալ սահմանափակումներ նախատեսված չեն:

Դ) Ամփոփում

Ուսումնասիրված երկրների վերաբերելի իրավակարգավորումների համադրված վերլուծության արդյունքում կարող ենք արձանագրել, որ բոլորի դեպքում քրեադատավարական օրենսդրությունները նախատեսում են որպես մարդու իրավունքների և ազատությունների իրացման ապահովման երաշխիք կալանքի ժամկետները: Բացի այդ, մեջբերված դեպքերում կալանքի առավելագույն ժամկետները կախված են քրեական դատավարության փուլից (որպես կանոն՝ դատաքննության ժամանակ ժամանակային առավել թույլ սահմանափակումներ են կամ դրանք ընդհանրապես առկա չեն) և մեղադրյալին մեղսագրվող հանցագործության ծանրությունից: Մեկ այլ ընդհանրական առանձնահատկություն է կալանքի առավելագույն ժամկետների՝ հատկապես դատաքննության փուլում, ոչ բացարձակ լինելը: Ասվածը վերաբերվում է համապատասխան օրենսդրություններով նախատեսված կալանքի առավելագույն հստակ ժամկետները երկարաձգելու կառուցակարգերի առկայությանը, ինչը հնարավորություն է տալիս իրավակիրառին դրսևորել ճկունություն և չլինել կաշկանդված իրավական ակտով սահմանված հստակ ժամկետով խափանման միջոց կիրառելիս, ինչը հատկապես կարևոր է հարաբերականորեն առավել բարդ և մեծածավալ գործերի քննության ժամանակ: Այս առումով ակնհայտ է Նոր օրենսգրքով նախատեսված կալանքի ժամկետների վերաբերյալ կարգավորումների՝ ի համեմատություն ուսումնասիրված այլ երկրների համապատասխան իրավադրույթներին իրավակիրառի համար էականորեն ավելի կաշկանդող բնույթը, որը զրկում է նաև վերջիններիս անհատական մոտեցում ցուցաբերել տարբեր քրեական վարույթներին և պատշաճ գնահատման ենթարկել դրանց առանձնահատկությունները:

Եզրակացություն

Այսպիսով, կատարված ուսումնասիրության արդյունքների հիման վրա հանգում եմ հետևյալին.

1. Նոր օրենսգրքով նախատեսվել է դատական քննության փուլում կալանքի տակ պահելու առավելագույն ժամկետ, որը հավասար է կալանքի ընդհանուր տևողության և մինչդատական վարույթում անձի կալանքի տակ գտնված լինելու ժամանակահատվածի տարբերությանը:

2. Առկա է օրենսդրական բաց կալանքի տակ պահելու ընդհանուր տևողությունը սահմանող իրավադրույթում այնքանով, որ չի նախատեսում մեղադրյալին ազատազրկման ձևով պատիժ չնախատեսող հանցանք մեղսագրելու դեպքում կալանքի տակ պահելու ընդհանուր տևողության հաշվարկի կարգը:

⁵⁹ R v Wirral District Magistrates Court, ex parte Meikle [1990] Crim L R 801.

3. Նոր օրենսգրքով մինչդատական վարույթում կալանքի տակ պահելու առավելագույն ժամկետների նախատեսումն առարկայազուրկ է, քանի որ նույն օրենսգրքով հստակորեն սահմանվել են մինչդատական վարույթում մեղադրյալի կարգավիճակ ունենալու առավելագույն ժամկետները, ինչն ինքնաբերաբար կարգավորում է նաև մեղադրյալին կալանքի տակ պահելու ժամկետները, քանի որ խափանման միջոցը կարող է կիրառվել միայն մեղադրյալի նկատմամբ:

4. Մինչդատական վարույթում կալանքի տակ պահելու առավելագույն այնպիսի ժամկետների նախատեսմամբ, որը հավասար է կոնկրետ ծանրության հանցանքի դեպքում հանրային քրեական հետապնդման ժամկետի և այդ ժամկետի առավելագույն երկարաձգման ժամկետի հանրագումարին, անտեսվել է հետապնդման ժամկետը կասեցնելու ինստիտուտը:

5. Մինչդատական վարույթում կալանք առավելագույն ժամկետների կարգավորումների մասով առկա է օրենսդրական փոփոխության անհրաժեշտություն, որը կա՛մ կնախատեսի մինչդատական վարույթում մեղադրյալին կալանքի տակ պահելու առավելագույն ժամկետը հաշվարկելիս նաև վերջինիս նկատմամբ հարուցված հանրային քրեական հետապնդման ժամկետը կասեցնելու ժամկետը, կա՛մ կվերացնի մինչդատական վարույթում մեղադրյալին կալանքի տակ պահելու ուղղակիորեն սահմանված ժամկետները:

6. Արդարացված չէ դատական վարույթում կալանքի տակ պահելու առավելագույն բացարձակ ժամկետների նախատեսումը:

7. Արդարացված չէ դատական վարույթում կալանքի տակ պահելու առավելագույն բացարձակ ժամկետների փոխկապակցումը մեղադրյալին վերագրվող հանցանքի համար նախատեսված ազատագրկման ձևով պատժի առավելագույն ժամկետին:

8. Նոր օրենսգրքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 12-ից 14-րդ կետերով նախատեսված քրեական հետապնդումը բացառող ոչ ռեաքիլիտացնող հանգամանքներից որևէ մեկի առկայության պայմաններում շարունակվող վարույթով մեղադրյալի նկատմամբ կարող է կիրառվել ցանկացած պիտանի և համաչափ այլընտրանքային խափանման միջոց, իսկ կալանք կարող է կիրառվել, եթե մեղադրյալը խախտել է այլընտրանքային խափանման միջոցի պայմանները:

9. Ծանր և առանձնապես ծանր հանցանքների համար ամբողջ վարույթի ընթացքում կալանքի տակ պահելու առավելագույն ժամկետները (կալանքի ընդհանուր տևողությունը) խնդրահարույց են չափազանց երկար լինելու պատճառով, ինչից բխում է դրանց էական նվազեցման անհրաժեշտությունը:

10. Դատական վարույթում կալանքի առավելագույն ժամկետների (կալանքի ընդհանուր տևողության) կարգավորումների մասով առկա է օրենսդրական փոփոխության անհրաժեշտություն, որը կա՛մ առկա կարգավորման փոխարեն կնախատեսի կալանքի առավելագույն հստակ ժամկետներ (առանց պատժին փոխկապակցման)¹ բացառիկ դեպքերում սահմանված առավելագույն ժամկետը երկարաձգելու հնարավորությամբ, կա՛մ կվերացնի դատական վարույթում կալանքի առավելագույն ժամկետային սահմանափակումները, կա՛մ կներառի

մեղադրյալի նկատմամբ կիրառված այլընտրանքային խափանման միջոցի պայմանը խախտելու դեպքում կալանավորման հնարավորություն՝ անկախ կալանքի առավելագույն ժամկետը լրացած լինելու հանգամանքից:

11. Այլ երկրների փորձի ուսումնասիրությունը վկայում է այն մասին, որ նախապատվություն է տրվում կալանքի ոչ բացարձակ ժամկետներ նախատեսող կարգավորումներին (հատկապես դատական քննության փուլում), որոնք հնարավորություն են տալիս երկարաձգել սահմանված ժամկետները խիստ անհրաժեշտության դեպքում:

Գրականության ցանկ (reference list, список литературы)

1. 2021 թվականի հունիսի 30-ին ընդունված ՀՀ քրեական դատավարության օրենսգիրք
The Criminal Procedure Code of the Republic of Armenia adopted on June 30, 2021
2. 1998 թվականի հուլիսի 1-ին ընդունված ՀՀ քրեական դատավարության օրենսգիրք
The Criminal Procedure Code of the Republic of Armenia, adopted on July 1, 1998
3. 2021 թվականի մայիսի 5-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգիրք
The Criminal Code of the Republic of Armenia adopted on May 5, 2021
4. 2018 թվականի մարտի 21-ին ընդունված «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենք
The RA Law "On Normative Legal Acts" adopted on March 21, 2018
5. ՀՀ սահմանադրական դատարանի 2017 թվականի նոյեմբերի 21-ի թիվ ՍԴՈ-1387 որոշում
Decision No. SDO-1387 of the Constitutional Court of the Republic of Armenia of November 21, 2017
6. ՀՀ սահմանադրական դատարանի 2010 թվականի սեպտեմբերի 18-ի թիվ ՍԴՈ-917 որոշում
Decision No. SDO-917 of the Constitutional Court of the Republic of Armenia of September 18, 2010
7. ՀՀ սահմանադրական դատարանի 2020 թվականի հունիսի 18-ի թիվ ՍԴՈ-1546 որոշում
Decision No. SDO-1546 of the Constitutional Court of the Republic of Armenia of June 18, 2020
8. ՀՀ սահմանադրական դատարանի 2009 թվականի սեպտեմբերի 12-ի թիվ ՍԴՈ-827 որոշում
Decision No. SDO-827 of the Constitutional Court of the Republic of Armenia of September 12, 2009
9. ՀՀ սահմանադրական դատարանի 2025 թվականի հուլիսի 30-ի թիվ ՍԴՈ-1792 որոշում
Decision No. SDO-1792 of the Constitutional Court of the Republic of Armenia of July 30, 2025
10. ՀՀ սահմանադրական դատարանի 2021 թվականի մարտի 16-ի թիվ ՍԴՈ-1585 որոշում
Decision No. SDO-1585 of the Constitutional Court of the Republic of Armenia of March 16, 2021
11. German Code of Criminal Procedure (Strafprozeßordnung – StPO) as last amended by Article 6 of the Act of 21 February 2024 (Federal Law Gazette 2024 I, No. 54) https://www.gesetze-im-internet.de/englisch_stpo/englisch_stpo.html (մուտք/access 14/09/2025)
12. The Prosecution of Offences (Custody Time Limits) Regulations 1987/299

Regulation 5 <https://www.legislation.gov.uk/ukxi/1987/299/regulation/5> (մուտք/ access 14/09/2025)

Regulation 4 <https://www.legislation.gov.uk/ukxi/1987/299/regulation/4> (մուտք/ access 14/09/2025)

13. Prosecution of Offences Act (1985), Section 22

<https://www.legislation.gov.uk/ukpga/1985/23> (մուտք/ access 14/09/2025)

14. Letellier v. France, 12369/86

15. A. and Others v. the United Kingdom, 3455/05; Yoh-Ekale Mwanje v. Belgium, 10486/10

16. McKay v. the United Kingdom, 543/03

17. Wemhoff v. Germany, 2122/64

18. Toth v. Austria, 11894/85

19. R v Wirral District Magistrates Court, ex parte Meikle [1990] Crim L R 801

20. Уголовно-процессуальный кодекс Российской Федерации от 18.12.2001 N174-ФЗ Criminal Procedure Code of the Russian Federation of 18.12.2001 N174-FZ https://www.consultant.ru/document/cons_doc_LAW_34481/ (մուտք/ access 14/09/2025)

21. Ղամբարյան Ա., Ղազարյան Ա., Թադևոսյան Ա., Հայաստանի Հանրապետության քրեական դատավարություն (օրենսդրությունը, սկզբունքները և սուբյեկտները), գիտաուսումնական ձեռնարկ, Երևան, Տիգրան Մեծ, 2024, 584 էջ

Ghambaryan A., Ghazaryan A., Tadevosyan A., Criminal Procedure of the Republic of Armenia (Legislation, Principles and Subjects), scientific and educational manual, Yerevan, Tigran Mets, 2024, 584 pages

22. Ղամբարյան Ա., Մուրադյան Մ., Պետության և իրավունքի տեսություն, ուսումնական ձեռնարկ, 4-րդ հրատ., Երևան, «Լուսաբաց հրատարակչատուն», 2023, 476 էջ

Ghambaryan A., Muradyan M., Theory of State and Law, textbook, 4th edition, Yerevan, "Lusabats Publishing House", 2023, 476 pages

23. Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության նոր օրենսգրքի հայեցակարգային լուծումների, նորարարական մոտեցումների և հիմնական ինստիտուտների մեկնաբանման գործնական ուղեցույց, 2022

Practical guide to interpreting conceptual solutions, innovative approaches and key institutions of the new Criminal Procedure Code of the Republic of Armenia, 2022

24. Գոր Հովհաննիսյան, Համաչափության սկզբունք, Պետություն և իրավունք, N1 (92) 2022, 47-61, <https://doi.org/10.46991/S&L/2022.92.047>

Gor Hovhannisyan, Principle of Proportionality, State and Law, N1 (92) 2022, 47-61, <https://doi.org/10.46991/S&L/2022.92.047>

25. Барабанов П.К., Уголовный процесс Италии, М.: Изд. «Спутник +», 2019, 461с.

Barabanov P.K., Criminal process of Italy, M.: Ed. "Sputnik +", 2019, 461 p.

26. Трефилов А.А., Меры принуждения в уголовном процессе Германии, Австрии, Швейцарии и Лихтенштейна: историческое развитие // Уголовная юстиция. 2022. № 19. С. 117–125. doi:10.17223/23088451/19/21

Trefilov A.A., Coercive measures in criminal proceedings in Germany, Austria, Switzerland and Liechtenstein: historical development // Criminal Justice. 2022. No. 19. P. 117–125. doi:10.17223/23088451/19/21

27. <https://www.civilnet.am/news/970831/> (մուտք/access 14/09/2025)

28. <https://blogs.worldbank.org/en/europeandcentralasia/how-long-too-long-when-justice-delayed-justice-denied> (մուտք/access 09/10/2025)

Marc Azdaridis

Chief Specialist of Department for the Protection of the Interests of the Republic of Armenia in International Arbitration and Foreign Courts, Office of the Representative of the Republic of Armenia on International Legal Matters, Office of the Prime Minister of the Republic of Armenia

SOME ISSUES OF DETENTION PERIODS ACCORDING TO THE NEW CRIMINAL PROCEDURE CODE OF THE RA⁶⁰

Abstract

The article is dedicated to the new regulations on the terms of detention provided for by the new Criminal Procedure Code of the Republic of Armenia adopted on June 30, 2021. In particular, the subject of the article includes the regulations providing for the absolute maximum duration of detention in the pre-trial and trial stages, as well as the regulations providing for the maximum term of imprisonment for the act charged to the accused as the basis for calculating the total duration of detention. The relevance of the chosen topic is evidenced, among other things, by the frequent use of extreme preventive measure like detention in the law practice of the Republic of Armenia, as well as the existence of numerous judgments issued by the European Court of Human Rights against the Republic of Armenia on the violation of the right to liberty and security of person defined by Article 5 of the ECHR. The work attempts to comprehensively interpret the relevant legal provisions, paying special attention to problematic issues. In particular, the following questions are raised: What changes have been made to the regulations on detention terms with the adoption of the new Criminal Procedure Code of the Republic of Armenia? Is it necessary and justified to provide for absolute maximum terms of detention in pre-trial proceedings? Is it justified to provide for absolute maximum terms of detention in trial proceedings and to correlate them with the maximum amount of punishment in the form of imprisonment for the crime attributed to the accused? What regulations do other progressive countries with legal systems similar to the legal system of the Republic of Armenia provide for detention terms?

Keywords: detention; terms of detention; right to personal liberty; public interest; private interest.

⁶⁰ The article was presented on 16.09.2025 and was reviewed on 06.10.2025.

Марк Аздаридис

*Главный специалист Департамента по защите интересов Республики Армения
в международном арбитраже и иностранных судах Офиса представителя
Республики Армения по международно-правовым вопросам
Аппарата Премьер-министра Республики Армения*

НЕКОТОРЫЕ ВОПРОСЫ СРОКОВ СОДЕРЖАНИЯ ПОД СТРАЖЕЙ СОГЛАСНО НОВОМУ УГОЛОВНО-ПРОЦЕССУАЛЬНОМУ КОДЕКСУ РА⁶¹

Абстракт

Статья посвящена новым положениям о сроках содержания под стражей, предусмотренным новым Уголовно-процессуальным кодексом Республики Армения, принятым 30 июня 2021 года. В частности, предметом исследования являются положения, предусматривающие абсолютные максимальные сроки содержания под стражей на досудебной и судебной стадиях, а так же, положения, предусматривающие максимальный срок лишения свободы за вменяемое обвиняемому преступление в качестве основы для исчисления общей продолжительности содержания под стражей. Актуальность выбранной темы подтверждается, в том числе, частым применением крайней меры пресечения заключения под стражу в правоприменительной практике Республики Армения, а также наличием многочисленных постановлений Европейского суда по правам человека против Республики Армения о нарушении права на свободу и личную неприкосновенность, установленного статьей 5 ЕКПЧ. В работе предпринята попытка всесторонне интерпретировать соответствующие правовые положения, уделяя особое внимание проблемным вопросам. В частности, поднимаются следующие вопросы: Какие изменения были внесены в положения о сроках содержания под стражей с принятием нового Уголовно-процессуального кодекса Республики Армения? Необходимо ли и оправдано ли установление абсолютных максимальных сроков содержания под стражей в досудебном производстве? Оправдано ли установление абсолютных максимальных сроков содержания под стражей в судебном производстве и их соотнесение с максимальным размером наказания в виде лишения свободы за преступление, вменяемое обвиняемому? Какие положения, регулирующие сроки содержания под стражей, существуют в других прогрессивных странах с правовыми системами, аналогичными правовой системе Республики Армения?

Ключевые слова: содержание под стражей; сроки содержания под стражей; право на личную свободу; публичный интерес; частный интерес.

⁶¹ Статья была представлена в 16.09.2025 и прошла рецензирование в 06.10.2025.